9	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	492.38	492.38	100		Չեղնահարկ	16.22													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Ավտոտնակ	14.32													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Սանհանգույց	9.58													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Ծածկ	5.86													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Նկատ	5.86													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Ծածկ	34.54													
	Համայնքային (ԵՔ)	չչ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	102.51	102.51	100		Ավտոտեխնս-պասարկման հոր	5.01													
10	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոջ կողմից օգտագործվող	1,729.49	1,729.49	100	Բնակելի	Բնակելի տուն	230.27	Մետաղ	32.5	Տարածք	Բնտոնապատ	35.25	3	17	Վերաբնակեցում	Վերաբնակեցում				
							Օժանդակ շինություն	35.3	Մետաղ	12	Տարածք	Բնտոնապատ	26								
							Ծածկ	4	Մետաղ	28.5	Տարածք	Բնտոնապատ	75.47								
							Սանհանգույց	1.84													
							Բնակելի տուն	48.06				Պանել	Ասբեստի շիֆեր	11.05							

№	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա շանկապատճեն		Ազդեցության ենթակա բարեկավումներ		Ազդեցության ենթակա տեսային տնտեսություններ								
	Մեփականության տեսակը	Օգոստորման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա մակերեսը, մ²	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ2	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ/մ²	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ², մ³, №	ԱԵՏՏ-ների համար՝ մ2, մ3, №	ԱԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում					
11	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոջ կողմից օգտագործվող	645	481.93	74.72	Բնակելի	Բնակելի տուն	101.54	Մետաղ	46	Տարածք	Բնունապատճեն	38.72	2	6	Վերաբնակեցում					
							Բնակելի տուն	84.71													
							Ծածկ	7.4													
							Բնակելի տուն	177.69													
							Ավագան	177.69													
							Ծածկ	100													
							Օժանդակ	44.98													
12	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	177.69	177.69	100	Բնակելի	-	-	-	-	-	-	-	-	2	9	Վերաբնակեցում				
	Համայնքային (ԵՔ)	Վարձակալված	1936.62	1936.62	100	Հասարակական	Բնակելի տուն	184.1	-	-	Տարածք	Ասֆալտ	690.7	2							
	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոջ կողմից օգտագործվող	753.57	753.57	100	Բնակելի	Ավագան	56.2													
							Ծածկ	17.1													
							Օժանդակ	44.98													
							Բնակելի տուն	56.4													

No	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա շանկապատ		Ազդեցության ենթակա բարեկավումներ		Ազդեցության ենթակա տեսային տնտեսություններ				
	Մեխականության տեսակը	Օգոստորձման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ2	Ազդեցության ենթակա մակերեսը, մ2	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ2	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ./մ2	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ2, մ3, №	ԱԵՏՏ-ների №	ԱԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում	
							Ավտոտնակների	267.93									
							Պահեստ	176									
							Սանհանգույց	5.21									
	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	161.26	161.26	100	Բնակելի	-	-	Մետաղ	37.56	-	-	-				
13	Մասնավոր	Անիմապես տեխնականատիրոջ կողմից օգտագործվող	144	144	100	Բնակելի	Բնակելի տուն	157.7	-	-	Տարածք	Բնունապատ	10.21	1	5	Վերաբնակեցում	
	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	351.14	351.14	100		Զեղնահարկ	37.52									
							Նկուղ	6.4									
14	Համայնքային (ԵՔ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող	469.89	469.89	100	Բնակելի	Բնակելի տուն	115.19	Մետաղ	42	Տարածք	Բնունապատ	34.12	1	5	Վերաբնակեցում	
							Օժանդակ շինություն	4.07									

*Բոլոր բնակելի վայրերից վերաբնակեցվողները, որոնք ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում են համայնքի սեփականությունը հանդիսացող հողերը, ՀՕՏ-ի համաձայն կստանան վերականգնման նպաստ հողօգտագործման դիմաց և կկարողանան վերականգնել իրենց բնակության վայրը:

No	Ազդեցության ենթակա հող						Ազդեցության ենթակա շինություն		Ազդեցության ենթակա ցանկապատ		Ազդեցության ենթակա բարեկավումներ		Ազդեցության ենթակա տեսային տնտեսություններ			
	Մեխականության տեսակը	Օգոստործման կարգավիճակը	Ընդհանուր մակերեսը, մ2	Ազդեցության ենթակա մակերեսը, մ2	Ազդեցության ենթակա % ընդհանուրի մեջ	Հողի տեսակը	Անվանումը	մ2	Նյութը	Ազդեցության ենթակա գ.մ/մ2	Անվանումը	Նյութը	Մակերեսը, մ2, մ3, No	ԱԵՏՏ-ների համար, մ2, մ3, No	ԱԵՏՏ անդամների թիվը	Վերաբնակեցում

2.5 Մշակաբույսեր

Թեև ազդեցության ենթակա տարածքը քաղաքային է, որոշ բնակչության են աճեցնում իրենց տնային տնտեսությունն ապահովելու համար: Սովորաբար, բանջարեղենն աճեցնում են պտղատու այգիներում, ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չզրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վրա կամ տնամերձ այգիներում, ԱԵՍ-ների բնակավայրերի մոտ: Այնուամենայնիվ, այստեղ «գյուղատնտեսական» կորուստ հասկացությունն ունի այլ իմաստ, քան գյուղատնտեսական կորուստը գյուղական բնակավայրերում: 13 ԱԵՍ-ի համար գյուղատնտեսությունն ապրուստի միջոց չէ, այլ ուղղակի հավելյալ միջոց իրենց տնային տնտեսությունների համար: Հատված 9-ում Տրանշ 2-ի ՀՕԾ-ի շրջանակներում ազդեցության կենքարկվեն 16 ԱԵՍ-ների կողմից օգտագործվող 20 հողակտորների մշակաբույսեր: Մողիալ-տնտեսական տվյալները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական գործունեության արդյունքում եկամտի հիմնական աղբյուր ունեն ընդամենը 3 ԱԵՍ: Այդ 3 ԱԵՍ-ներն ունեն թե՛ գյուղատնտեսական եկամտի, թե՛ բնակավայրի կորուստ, որի համար վերականգնման (զգալի ազդեցության և խոցելիության համար նպաստներ) և կենսապահովման վերականգնման նպաստներ են հաշվարկվել: Առավել հաճախ աճեցվում են ելակը, լոլիկը, պղպեղը և բաղրիջանը: Ծրագիրն ազդեցություն է գործում նաև 167.00մ² տարածքի վրա, որտեղ դեկորատիվ ծաղիկներ են աճեցվում: Այսպիսով, Ընդհանուր առմամբ տարեկան լինելու է 557.93 կգ տարբեր բանջարեղենի կորուստ:

Աղյուսակ 2-8 Ազդեցությունն մշակաբույսերի վրա

Մշակաբույսի տեսակը	Տարեկան արտադրողա- կանությունն	Ազդեցության ենթակա տարածքը	Ընդհանուր կորուստը
	կգ/մ ²	մ ²	կգ
Դեկորատիվ ծաղիկներ	1.0	167	-
Բամիա	3.0	7.50	22.50
Գետնախնձոր	4.7	2.00	9.30
Դրում	4.7	0.50	2.33
Կանաչի	3.0	13.50	40.50
Ելակ	0.6	36.00	21.60
Լորի	3.0	2.00	6.00
Լոլիկ	4.2	71.50	300.30
Չերի լոլիկ	4.2	0.50	2.10
Հազար	3.0	3.50	10.50
Սմբուկ	3.0	20.00	60.00
Վարունգ	2.7	4.00	10.80
Պղպեղ	3.0	24.00	72.00
Ընդհանուր	-	352.00	557.93

2.6 Ծառեր

Հատված 9-ում Տրանշ 2-ի ՀՕԾ-ն ազդելու է 2,545 մրգատու ծառերի և թփերի վրա: Դրանցից 1,328 մրգատու թփեր են, իսկ 1,217՝ մրգատու ծառեր:

Ազդեցության ենթակա թվերի մեծ մասը ազնվամորի է, մոշենի և հաղաքենի: Ազդեցության ենթակա ծառերի մեծ մասը բալենի է, խաղող և ծիրանենի: Ընդհանուր առմամբ մրգատու ծառերի և թվերի կորուստ է ունենալու 34 տնային տնտեսություն: Օգտագործողները կստանան լիարժեք փոխհատուցում ազդեցության ենթակա ծառերի դիմաց: Ազդեցության ենթակա մրգատու թվերի և ծառերի ամփոփ տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 2-9 Ազդեցությունը մրգատու ծառերի վրա

Ծառի տեսակը	Նորատունկ	Դեռևս ոչ պտղատու	Բերքատու	Ընդամենը
	No	No	No	No
Ա. Մրգատու թվեր				
Ազնվամորի	-	-	338	338
Կոկոռոշ	-	-	5	5
Հաղաքենի	-	3	123	126
Մասրենի	-	-	36	36
Մոշենի	-	-	822	822
Ազնի	-	-	1	1
Ենթարնդիանուր (Ա)	-	3	1,325	1,328
Բ. Մրգատու ծառեր				
Բալենի	49	66	126	241
Բալ (շպանկա)	22	-	3	25
Դեղձենի	13	3	33	49
Դեղձ նեկտօրին	-	-	1	1
Թզադեղձ	-	-	1	1
Թզենի	1	-	24	25
Ընկուզենի	17	4	30	51
Թթենի	16	1	64	81
Արջի թութ	-	-	2	2
Խաղող	42	9	96	147
Խնձորենի	19	1	93	113
Ծիրանենի	12	3	109	124
Արքայանարինջ	-	-	7	7
Կեռասենի	16	9	69	94
Հնձենի	1	1	2	4
Մարգախնձոր	-	-	7	7
Նշենի	1	1	7	9
Նուենի	1	4	13	18
Շլորենի	6	1	32	39
Սալորենի	37	19	55	111
Սերկնիլենի	2	-	15	17
Տանձենի	7	4	13	24
Տխլենի	-	4	15	19
Փշատենի	-	4	4	8
Ենթարնդիանուր (Բ)	262	134	821	1,217

Ծառի տեսակը	Նորատունկ	Դեռևս ոչ պտղատու	Բերքատու	Ընդամենը
	No	No	No	No
Ընդամենը (Ա+Բ)	262	137	2,146	2,545

Հատված 9-ում Տրանշ 2-ի ՀՕՏ-ն ազդելու է 73 փայտանյութ տվող ծառերի վրա: Ազդեցության ենթակա փայտանյութ տվող ծառերի մեծամասնությունը կազմում է հացենին և թեղին (8 և 58): Ազդեցության ենթակա բոլոր ծառերի 90%-ը նորատունկ ծառեր են: 14 տնային տնտեսություն կլրի փայտանյութ տվող ծառերի կորուստ: Ազդեցության ենթակա ծառերն օգտագործողները կփոխադրուցվեն՝ առանց ծառերը կտրելուց հետո փայտանյութից ստացված արժեքի մասնահանման:

Աղյուսակ 2-10 Ազդեցությունը փայտանյութ տվող ծառերի վրա

Տեսակը	Նորատունկ	Միջին տարիքի	Հասուն	Ընդամենը
	No	No	No	No
Այլանթ	4	-	-	4
Բարդի	-	-	2	2
Թեղի	53	2	3	58
Հացենի	8	-	-	8
Ուռենի	1	-	-	1
Ընդամենը	66	2	5	73

Հատված 9-ում Տրանշ 2-ի ՀՕՏ-ն ազդելու է նաև 697 դեկորատիվ ծառերի և թփերի վրա: Ինչպես ցույց է տրված ստորև բերված աղյուսակում, ազդեցության է ենթարկվելու հիմնականում թույան: Հատված 9-ում Տրանշ 2-ի ՀՕՏ-ն հարուստ է դեկորատիվ թփերով և այգում աճեցվող ծաղիկներով: Գրեթե յուրաքանչյուր տուն ունի ծաղկանց: Ազդեցության են ենթարկվելու 681 դեկորատիվ թփեր և այգում աճեցվող տարբեր տեսակների ծաղիկներ: Առավել մեծ ազդեցություն են կրելու վայրի խաղողը և ազնիվ վարդը: Ազդեցության ենթակա դեկորատիվ բոլոր ծառերը և թփերը պատկանում են 24 տնային տնտեսությունների:

Աղյուսակ 2-11 Ազդեցությունը դեկորատիվ ծառերի և թփերի վրա

Տեսակը	Փոքր	Միջին	Մեծ	Ընդամենը
	No	No	No	No
Ա. Դեկորատիվ թփեր				
Ազնիվ վարդ	13	9	398	420
Մազարա վարդ	-	-	2	2
Հիբրիդային վարդ	-	-	22	22
Վայրի խաղող	-	-	128	128
Տնսախ	-	12	1	13
Սիրիական վարդ	-	-	1	1
Հասմիկ	6	-	-	6
Տեկոմա	-	-	2	2
Արմավաշուշան	6	-	-	6
Արմավենի	-	-	1	1
Եղինականի	4	5	47	56
Կալինա բուլղոնեց	-	-	1	1
Ճապկի	-	-	23	23

Տեսակը	Փոքր	Միջին	Սև	Ըստամենք
	No	No	No	No
Ենթաքաղաքանուր (Ա)	29	26	626	681
Բ. Դեկորատիվ ծառեր				
Եղինի	-	-	1	1
Թույա	-	1	12	13
Սոճի	1	1	-	2
Ենթաքաղաքանուր (Բ)	1	2	13	16
Ըստամենք (Ա+Բ)	30	28	639	697

2.7 Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության և եկամտի վրա

Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության բնույթի և շրջանակի հիման վրա սույն ՀՕՏ-ի համար սահմանվել են ձեռնարկատիրական գործունեության միայն մշտական կորուստները: Դա ներառում է ձեռնարկատիրական գործունեության այն կորուստները, որոնք առաջացել են հիմնական շենքերը քանդելու կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրից կառույցը մշտապես տեղափոխելու հետևանքով: ԱԵԱ-ները կստանան դրամական փոխհատուցում՝ 1 տարվա զուտ եկամտի չափով:

Այս Ենթածրագրով ազդեցության ենթակա է ընդհանուր առմամբ 11 ձեռնարկատիրական գործունեություն: Դրանք պատկանում են 11 տնային տնտեսությունների, որոնք բաղկացած են ազդեցության ենթակա 51 անձանցից: Բոլոր 11 ձեռնարկատիրական գործունեությունները կրելու են մշտական ազդեցություն, որոնցից 6-ն ունեն հարկային հայտարարագիր, իսկ 5-ը հարկային հայտարարագիր չունեն: Դրանցից 7-ը կորցնելու են շինություն և դրա հետ մեկտեղ ձեռնարկատիրական գործունեությունը, իսկ 4-ը կորցնելու են միայն ձեռնարկատիրական գործունեությունը, քանի որ դրանք չեն հանդիսանում ազդեցության ենթակա շենքերի սեփականատեր, ինչպես նաև վարձավճար չեն վճարում: Ազդեցության և եկամտի վերականգնման վերաբերյալ մանրամասները ներկայացված են Գլուխ 7-ում՝ «Փոխհատուցում, վերաբերյալ մանրամասները և եկամտի վերականգնում»:

Աղյուսակ 2-12 Մշտական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության վրա

No	Նկարագրություն	Հարկային հայտարար ազրով	Առանց հարկային հայտարարաց րի	Հողակ- տորների No	Մեկնաբանություն
		No	No		
1	Շինանյութի վաճառք	2	-	2	
2	Բենզալդեհիան	1	-	1	
3	Ուլուտրափոխա- դրման և թեռնափոխադրման ծառայություններ	1	-	1	
4	Հացի փուռ	1	-	2	
5	Սննդամթերքի ներմուծում և վաճառք	1	-		
6	Բանջարեղենի պահեստավորում, տեսակավորում և վաճառք	-	1	1	Ձեռնարկատիրական գործունեությունը հարկերից ազատված է, քանի որ այն ցուղատնտեսական է: Ֆւլք հաստատեց, որ ձեռնարկատերը որևէ հարկային հաշվետվություն չի ներկայացրել: Հաշվի առնելով այդ փաստը՝ փոխհատուցումը հաշվարկվել է առանց

No	Նկարագրություն	Հարկային հայտարար ազրով	Առանց հարկային հայտարարագ րի	Հոդակ- տորների No	Մեկնաբանություն
		No	No		
					հարկային հայտարարագրի ձեռնարկատիրական գործունեության համար կիրառվող եղանակով:
7	Թոշնաբուծություն	-	1	1	Ձեռնարկատիրական գործունեությունը հարկերից ազատված է, քանի որ այն գյուղատնտեսական է: Թեև օտարություն հետո հավաքնի վերակառուցման համար բավարար հողակտոր է մնում, այնուամենայնիվ, ձեռնարկատերը պնդում է, որ չի կարող հավաքունը վերակառուցել հողակտորի պահպանվող մասի վրա հիգիենայի նկատառությունը ելնելով, հետևաբար, ձեռնարկատիրական գործունեությունը դիտարկվում է որպես մշտական ազրեցության ենթարկվող: Փոխհատուցումը հաշվարկվել է առանց հարկային հայտարարագրի ձեռնարկատիրական գործունեության համար կիրառվող եղանակով:
8	Սննդաբուծություն	-	1	1	Ձեռնարկատիրական գործունեությունը հարկերից ազատված է, քանի որ այն գյուղատնտեսական է: Հաշվի առնելով այդ փաստը, փոխհատուցումը հաշվարկվել է առանց հարկային հայտարարագրի ձեռնարկատիրական գործունեության համար կիրառվող եղանակով: Փոխհատուցումը հաշվարկվել է մեղվագեթակների համար որպես շարժական գույք:
9	Մեղվարություն	-	1	1	Ձեռնարկատիրական գործունեությունը հարկերից ազատված է, քանի որ այն գյուղատնտեսական է: Հաշվի առնելով այդ փաստը, փոխհատուցումը հաշվարկվել է առանց հարկային հայտարարագրի ձեռնարկատիրական գործունեության համար կիրառվող եղանակով: Փոխհատուցումը հաշվարկվել է մեղվագեթակների համար որպես շարժական գույք:
10	Ավտոմեքենաների տեխնապասարկում	-	1	1	Ձեռնարկատիրական գործունեությունը ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չզրանցված իրավունքով է:
Ընդամենը		6	5	11	

2.8 Ազդեցությունը գրաղվածության վրա

Ձեռնարկատիրական գործունեության հիմնական շինությունների ապամոնտաժման արդյունքում ձեռնարկատիրական գործունեության փակման/տեղափոխման հետևանքով 15 աշխատողներ մշտապես կկորցնեն իրենց աշխատանքները:

Աղյուսակ 2-13 Ազդեցությունը գրաղվածության վրա

Կորուստ	Ազդեցության ենթակա աշխատողներ
	No
Գրաղվածության մշտական կորուստ	15
Ընդամենը	15

2.9 Զգալի ազդեցության ենթակա տնային տնտեսություններ

Համաձայն ՔԿԾՆԾ ՀՕԾ-ի՝ միայն այն տնային տնտեսությունները, որոնք կորցնում են գյուղատնտեսական եկամտի 10%-ը կամ ավելի, և նրանք, ովքեր կվերաբնակեցվեն իրենց

բնակելի շենքերից, համարվում են զգալի ազդեցության ենթակա և, հետևաբար, իրավասու են ստանալ զգալի ազդեցության ենթակա անձանց հասանելիք նպաստը: Ընդհանուր առմամբ 37 ԱԵSS կփոխատուցվի որպես զգալի ազդեցության ենթակա ԱԵSS, որոնցից 32 ԱԵSS ազդեցության ենթակա հողակտորներից կորցրած մրգատու ծառերի հետևանքով կկորցնի 10% կամ ավելի զյուղատնտեսական եկամուտ, իսկ 19 ԱԵSS կվերաբնակեցվի: Վերաբնակեցվող 14 ԱԵSS-ները նաև կկորցնեն 10% կամ ավելի զյուղատնտեսական հող ազդեցության ենթակա իրենց հողակտորներից: ԱԵՍ-ների իրավական կարգավիճակից անկախ՝ 10% կամ ավելի զյուղատնտեսական եկամուտ կորցնող ԱԵSS-ներից յուրաքանչյուրը մշակաբույսերի համար կստանա լրացուցիչ փոխատուցում 1 տարվա բերքի չափով: Վերաբնակեցվող ԱԵSS-ները կստանան վերականգնման նպաստ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Ազդեցության և եկամտի վերականգնման վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Գլուխ 7-ում՝ «Փոխատուցում, վերաբնակեցում և եկամտի վերականգնում»:

Աղյուսակ 2-14 Ազդեցության աստիճանը

No	Ազդեցության աստիճանը	Ընդամենը	
		ԱԵSS-ներ	ԱԵՍ-ներ
		No	No
Ա.	ԱԵSS-ներ, որոնք կորցնում են զյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը	32	160
Բ	Գյուղատնտեսական ձեռնարկատիրական գործունեությունները կորցնող ԱԵSS-ներ	3	12
Գ	Վերաբնակեցվող ԱԵSS-ներ (14-ն ընդգրկված են Ա-ում)	19	89
Ընդամենը (առանց կրկնահաշվարկի)		37	172

2.10 Ազդեցությունն աղքատների և խոցելի խմբերի վրա

Համաձայն ՔԿԶՆԾ ՀՕԾ-ի հավելվածի՝ «խոցելիությունը» որոշվում է հետևյալ կերպով.

«Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում (ԸԽԳՀ) գրանցված անձինք, որոնք ստանում են ընտանեկան նպաստ: *Սոցիալապես խոցելի անձինք այն տնային տնտեսություններն են, որոնք դեկավարում են կանանց կամ տարեցների կողմից և չեն ներառում այլ չափահաս, աշխատանքային տարիքի անձ՝ կայուն աշխատանքով, որն առնվազն ապահովում է նվազագույն ամսական աշխատավարձ, բացի պարտադիր զինծառայություն անցնող կամ մինչև քսաներեք տարեկան ցերեկային ուսուցմամբ սովորողները»:*

Սույն ՀՕԾ ներքո կան ԸԽԳՀ-ում հաշվառված 3 ԱԵSS-ներ, որոնք ստանում են համապատասխան նպաստներ: (Հայաստանի Հանրապետությունում գործում է սոցիալական ապահովության ծրագիր, որը նպաստ է ապահովում աղքատների համար և կոչվում է Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգ (ԸԽԳՀ): Այդ նպաստը ստանալու համար ընտանիքը պետք է ներկայացնի դիմում և բավարարի հիմնական չափանիշները, որոնք գնահատվում են՝ ըստ տնային տնտեսության չափի և կազմի, խոցելիության և եկամտի:) Վեց տնային տնտեսություն դեկավարում է կանանց, հինգը տարեցների կողմից: Նրանք ստանալու են փոխիհատուցում որպես խոցելի տնային տնտեսություններ և վերականգնման նպաստ 6 ամսվա նվազագույն ամսական աշխատավարձի չափով: Ընդհանուր առմամբ 13 ԱԵSS ստանալու է փոխիհատուցում որպես խոցելի:

Աղյուսակ 2-15 Ազդեցությունն աղքատ և խոցելի ազդեցության ենթակա տնային տնտեսությունների վրա*

Տեսակը	Ընդամենը
--------	----------

	ԱԵՍՏ-ներ	ԱԵԱ-ներ
	No	No
Աղքատ ԱԵՏՏ-ներ	3	22
Կանանց կողմից դեկավարվող ԱԵՏՏ-ներ	6	8
Տարեցների կողմից դեկավարվող ԱԵՏՏ-ներ	5	12
ԱԵՏՏ-ների (ԱԵԱ-ների) ընդհանուր թիվը առանց կրկնահաշվարկի	13**	42
•ՀՕՏ-ի պահանջների համաձայն՝ USՀ-ի արդյունքում բացահայտված աղքատ տնային տնտեսությունների ցանկը համեմատվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված Ընդհանուր ընդգրկված աղքատ տնային տնտեսությունների ցանկի հետ: Պարզվեց, որ այդ ցանկը լիովին համապատասխանում է նախարարության կողմից տրամադրված ցանկին, որը նշանակում է, որ ԱՄՀ-ի արդյունքում աղքատ համարված բոլոր ԱԵՏՏ-ներն արդեն ընդգրկված են Ընդհանուր Այսպիսով՝ այդ ԱԵՏՏ-ներին տրամադրվող համապատասխան նպաստները հաշվարկված և ներառված են սույն ՀՕՏ-ում:		
**1 ԱԵՏՏ և աղքատ է, և դեկավարվում է կնոջ կողմից:		

2.11 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների և ազդեցության ենթակա անձանց տվյալների ամփոփում

Մարդահամարի արդյունքում բացահայտվեցին 76 ազդեցության ենթակա տնային տնտեսություններ՝ ընդհանուր առմամբ 302 անդամներով: Տասնմեկ տնային տնտեսություն պետք է տեղափոխի ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրը և վերականգնի իր ձեռնարկատիրական գործունեությունը, քանի որ ձեռնարկատիրական գործունեության գլխավոր շինություններն ապամոնտաժվելու են: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների (ԱԵՏՏ-ների) և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ-ների) տարբեր կատեգորիաների վերաբերյալ տվյալներն ըստ ազդեցության տեսակի, ինչպես նաև զուտ թվերը առանց կրկնահաշվարկի, ներկայացված են ԱԵՏՏ/ԱԵԱ-ների տվյալների ամփոփագրում, որը ներառված է սույն գլխի վերջնամասում: Ընդհանուր առմամբ Տրանշ 2-ի հատված 9-ն ազդելու է 60 ԱԵՏՏ-ի պատկանող հողակտորների, 29 ԱԵՏՏ-ի պատկանող շենքերի և շինությունների, 40 ԱԵՏՏ-ի պատկանող ծառերի և մշակաբույսերի, 19 ԱԵՏՏ-ի պատկանող բնակելի տների և 15 ԱԵՏՏ-ի գրադաժության վրա:

Աղյուսակ 2-16 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները/անձինք՝ ըստ ազդեցության տեսակի

Ազդեցության տեսակը	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	No	Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշ- վարկի	
Ա. Ազդեցությունը հողի վրա ըստ իրավական կարգավիճակի				
Ա1. Մասնավոր	39	39	157	-
Ա2. Համայնքային	33	22	84	11 ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում
Ա3. Պետական հող	1	0	0	-
Բ. Ազդեցությունը շենքերի վրա				
Բ1. Բնակելի շինություններ	24	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում
Բ2. Ոչ բնակելի շինություններ	11	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում
Բ3. Շարժական շինություններ	9	1	6	8 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում
Բ4. Ցանկապատեր	39	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում

Ազդեցության տեսակը	ԱԵՏՏ-ներ	ԱԵՏՏ-ներ	ԱԵԱ-ներ	Նշումներ
	No Ըստ ազդեցության տեսակի	Առանց կրկնահաշվ- վարկի	Բացարձակ No	
Գ. Ազդեցությունը ծառերի և մշակաբույսերի վրա				
Գ1. Մրգատու ծառեր և թփեր	34	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում:
Գ2. Փայտանյութ տվող ծառեր	14	0	0	
Գ3. Դեկորատիվ ծառեր, թփեր, ծաղիկներ	24	0	0	
Գ4. Մշակաբույսեր	17	0	0	
Դ. Ազդեցությունը ձեռնարկատիրական գործունեության վրա				
Դ1. Մշտական՝ հարկային հայտարարագրի առկայությամբ	6	4	20	2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում
Դ2. Մշտական՝ առանց հարկային հայտարարագրի	5	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում
Ե. Ազդեցությունն աշխատանքի վրա				
Ե1. Զբաղվածության մշտական կորուստ	12	8	28	2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում 2 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Դ1-ում
Զ. ԱԵՏՏ-ների խոցելիությունը				
Զ. Խոցելի ԱԵՏՏ-ներ	13	1	1	1 ԱԵՏՏ ընդգրկված է Ե-ում 5 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում 6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում
Է. Վերաբնակեցման ազդեցություն				
Է1. Ձեռնարկատիրական գործունեության տեղափոխում	11	0	0	Բոլոր ԱԵՏՏ-ներն ընդգրկված են Ա1-ում և Ա2-ում
Է2. Վերաբնակեցում	19	2	6	1 ԱԵՏՏ ընդգրկված է Զ-ում 10 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա1-ում 6 ԱԵՏՏ-ներ ընդգրկված են Ա2-ում
Ընդամենը	-	76	302	

3 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

3.1 Ընդհանուր տեղեկություններ

Սույն գլխում ներկայացվում են ազդեցության ենթակա բնակչության և ծրագրի համայնքների սոցիալ-տնտեսական հիմնական առանձնահատկություններին առնչվող եզրակացությունները: Սույն գլխում ներկայացված տեղեկությունները պատրաստվել են առկա երկրորդական տվյալներից, սոցիալ-տնտեսական հետազոտության միջոցով հավաքագրված տվյալներից, ինչպես նաև սույն ՀՕՏ-ի տարածքներում ընդգրկված Ծրագրի ազդեցության ենթակա համայնքում իրականացված մարդահամարի տվյալներից: Հարցումների հիմնական նպատակն է հասկանալ Ծրագրի տարածքում ազդեցության ենթակա անձանց և ընտանիքների առկա սոցիալ-տնտեսական վիճակը և խոցելիությունը, օգտագործել տվյալները ՀՕՏ-ի բյուջեի նախապատրաստման համար և բացահայտել աջակցության լրացուցիչ կարիք ունեցող խմբերին և անձանց:

3.2 Հետազոտության մեթոդաբանությունը

Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական (ԱՏՀ) և մարդահամարի հետազոտություններն իրականացվել են 2015 թ. հուլիսի 6-ից մինչև 2016 թ. փետրվարի 23-ն ընկած ժամանակաշրջանում: Ազդեցության ենթակա բոլոր ԱԵՍ-ները, այդ թվում՝ ազդեցության ենթակա հողերի և շենքերի սեփականատերերը, վարձակալները և օգտագործողները, մշտական ազդեցության ենթակա միջին և փոքր ձեռնարկատիրական գործունեությունների սեփականատերերը և ԱԵՍ-ները, ովքեր մշտապես կորցնելու են իրենց աշխատանքը, հարցվել են հարցաթերթիկների միջոցով և հեռախոսով (հավելվածներ 3, 4, 5): Յուրաքանչյուր հարցաթերթիկի լրացման համար 30-40 րոպե է պահանջվել: Հավաքագրված տվյալները մշակվել են MySQL ծրագրակազմով: Ընդհանուր առմամբ հարցվել են 65 ազդեցության ենթակա տնային տնտեսություն (մնացած 11 ԱԵՏ-ներից 5-ը իրաժարվել են պատասխանել հարցերին, 4 ԱԵՏ եղել է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, և 2 ԱԵՏ անհասանելի է եղել մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության համար): Դա կազմում է ընտրանքի 100%-ը:

3.3 Ազդեցության ենթակա անձանց և տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական նկարագիրը

3.3.1 ԱԵՍ-ների սեռն ու էթնիկ ծագումը

ՀՀ օրենսդրությունը և մասնավորապես Հայաստանի Հանրապետությունը, կանանց ու տղամարդկանց շնորհում են հավասար իրավունքներ, այդ թվում՝ հողատարածքի և գույքի սեփականության, կրթության, առողջապահության, զբաղվածության, աշխատանքային պայմանների և կատարված աշխատանքի դիմաց վճարման հավասար իրավունք և՝ պետական, և՝ մասնավոր սեկտորում, ինչպես նաև հավասար անձնական և ընտանեկան իրավունքներ: Զկա իրավական խտրականություն

գույքի, հողատարածքի զբաղեցման, ժառանգության, սեփականության և ձեռնարկատիրական գործունեության իրավունքների միջև:

ԱՄՀ տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր ԱԵԱ-ներից կանայք կազմում են 52.23% (152), իսկ տղամարդիկ՝ 47.77% (139) (Աղյուսակ 3-2): Սակայն, տնային տնտեսությունների դեկավարների նկարագիրը ցույց է տալիս, որ տնային տնտեսությունների կին դեկավարները կազմում են ընդամենը 21.54% (14):

Աղյուսակ 3-1 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների դեկավարների և անդամների սեռ

Սեռ	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	Ընդհանուրի %-ը	Թիվը	Ընդհանուրի %-ը
Արական	51	78.46	88	38.94
Իգական	14	21.54	138	61.06
Ընդամենը	65	100	226	100

Աղյուսակ 3-2 Ազդեցության ենթակա անձանց սեռ

Սեռ	Թիվը	Ընդհանուրի %-ը
Արական	139	47.77
Իգական	152	52.23
Ընդամենը	291	100.00

9-րդ հատվածում հարցված բոլոր ԱԵԱ-ները հայեր են:

Աղյուսակ 3-3 Ազդեցության ենթակա անձանց ազգային պատկանելությունը

Ազգային պատկանելություն	ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	Ընդհանուրի %-ը
Հայ	291	100.00
Ընդամենը	291	100.00

3.3.2 Ընտանիքի կազմը և սոցիալ-տնտեսական դասակարգումը

Մարդասիամարի արդյունքում բացահայտվեց ազդեցության ենթակա 65 տնային տնտեսություն՝ ընդհանուր 226 անդամներով: Ընտրանքային խմբում 79.02% (177)-ը չափահասներ, իսկ 20.98%-ը (47)՝ անչափահասներ են: Յուրաքանչյուր ազդեցության ենթակա տնային տնտեսությունում միջինում կա 3.47 անձ: Ամուսնական կարգավիճակի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ ամուսնացած են տնային տնտեսության դեկավարների 72.31%-ը և այլ անդամների 47.79%-ը, մինչդեռ տնային տնտեսության անդամների 22.57%-ը միայնակ է: Տնային տնտեսության դեկավարների 18.46%-ը և այլ անդամների 3.1%-ն այրի են: Տնային տնտեսության անդամների ամուսնալուծված դեկավարների տոկոսը (3.08%) նշանակալի չէ:

Աղյուսակ 3-4 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների դեկավարների և անդամների ամուսնական կարգավիճակը

Ամուսնական կարգավիճակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Ամուսնացած	47	72.31	108	47.79
Ամուրի	4	6.15	51	22.57
Այրի	12	18.46	7	3.10

Ամուսնական կարգավիճակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Ամուսնալուծված	2	3.08	7	3.10
Կիրառելի չէ / անշափահասներ	-	-	53	23.45
Ընդամենը	65	100	226	100.00

3.3.3 Տարիքը

Հարցված բնակչության տարիքային բաշխումը ցույց է տալիս, որ 56-65 տարիքային խումբն ամենաներկայացվածն էր տնային տնտեսությունների դեկավարների շրջանում (47.69%), մինչդեռ տնային տնտեսության անդամների շրջանում ամենաներկայացվածը 18-35 խումբն է (43.75%): Երիտասարդական համայնքի նկարագիրն անգամ ավելի է արտահայտված, եթե երկու տարիքային խմբերը (0-17 և 18-35) համակցվում են: Նման համեմատությունը ցույց է տալիս, որ բնակչության ավելի, քան կեսը 35 տարեկանից ցածր է: Տնային տնտեսությունների դեկավարների ամենամեծ տարիքային խումբը ցույց է տալիս տարիքային խմբերի երեք վիճակագրական մոդել՝ 46-55, 56-65, 66 և ավելին:

Աղյուսակ 3-5 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների դեկավարների և անդամների տարիքային բաշխումը

Տարիքը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
0 – 17	-	-	47	20.98
18 – 35	2	3.08	98	43.75
36 – 45	3	4.62	28	12.50
46 – 55	18	27.69	21	9.38
56 – 65	31	47.69	21	9.38
66 կամ ավելի	11	16.92	9	4.02
Ընդամենը	65	100.00	224*	100.00

* 2 ԱԵՏՏ անդամների տարիքները չեն որոշվել:

3.3.4 Կրթությունը

Հետևյալ աղյուսակում երևում է, որ տնային տնտեսությունների դեկավարների մոտ 60%-ն ունի նվազագույնը միջնակարգ կրթություն: Գրագիտության բարձր մակարդակ է արձանագրվում նաև ընտանիքի անդամների շրջանում (59.29%-ն ունի արնվազն միջնակարգ կրթություն): Տնային տնտեսությունների դեկավարների շուրջ 40%-ն ունի բարձրագույն կրթություն, մինչդեռ ընտանիքի անդամների կազմում բարձրագույն կրթության տոկոսը զգալիորեն ցածր է (29.65%): Ըստիանուր առմամբ տնային տնտեսությունների դեկավարների կրթությունն ավելի բարձր է բոլոր կրթական դասակարգումներում, բացառությամբ միջնակարգ դպրոցի (տասնամյա կրթություն), որտեղ ընտանիքի մյուս անդամները զգալիորեն ավելի մեծ տոկոս են կազմում (27.43%-ը 24.6%-ի նկատմամբ):

Աղյուսակ 3-6 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների դեկավարների և անդամների կրթությունը

Կրթական կարգավիճակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Անուսում	-	-	1	0.44
Տարրական	-	-	16	7.08
Միջին դպրոց	4	6.2	9	3.98

Կրթական կարգավիճակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Միջնակարգ (10 տարի)	16	24.6	62	27.43
Ավագ դպրոց (12 տարի)	-	-	5	2.21
Միջնակարգ մասնագիտական	19	29.2	30	13.27
Համալսարանի ուսանող (ցերեկային ուսուցում)	-	-	10	4.42
Համալսարանի ուսանող (հեռակա)	-	-	1	0.44
Համալսարանի դիպլոմ	26	40.0	67	29.65
Թերի բարձրագույն կրթություն	-	-	2	0.88
Կիրառելի չէ	-	-	23	10.18
Ընդամենը	65	100.0	226	100.0

3.3.5 Զբաղվածությունը և եկամտի աղբյուրները

Զբաղվածության և եկամտի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 65 ԱԵՏՏ-ներից, իսկ տեղեկությունները հաղորդվել են հարցվողների կողմից: Բոլոր ԱԵՏՏ-ները մասնակցել են հետազոտությանը և պատասխանել են հարցերին:

Տնային տնտեսությունների դեկավարների 75.38%-ն աշխատանք ունի, 18.46%-ը թոշակառու է, մինչդեռ տնային տնտեսության այլ անդամների միայն 41.59%-ն է աշխատում, իսկ 3.54%-ը թոշակառու է: Տնային տնտեսության անդամների հաջորդ ներկայացուցչական խումբն ուսանողությունն է (18.58%): Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների զբաղվածության վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 3-7 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների դեկավարների և անդամների զբաղվածության կարգավիճակը

Զբաղվածության կարգավիճակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Աշխատանք ունեցող	49	75.38	94	41.59
Թոշակառու	12	18.46	8	3.54
Ուսանող, աշակերտ	-	-	42	18.58
Գործազուրկ և աշխատանք չլինողող	1	1.54	29	12.83
Գործազուրկ և աշխատանք լինողող	1	1.54	26	11.50
Զինծառայող	-	-	2	0.88
Հաշմանդամ	2	3.08	2	0.88
6 տարեկանից ցածր կիրառելի չէ	-	-	23	10.18
Ընդամենը	65	100.00	226	100.00

Աղյուսակ 3-8 Զբաղվածության տեսակը

Զբաղվածության տեսակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամներ	
	Թիվը	%	Թիվը	%
Քաղաքացիական ծառայող	11	22.45	27	28.72
Մասնավոր հատվածի աշխատող	23	46.94	45	47.87
Ինքնազբաղված	3	6.12	6	6.38
Ձեռնարկատեր	7	14.29	9	9.57
Գյուղատնտեսության բնագավառի աշխատող (մասնավոր)	5	10.20	7	7.45

Գրաղվածության տեսակը	ԱԵՏՏ դեկավար		ԱԵՏՏ անդամ	
	Թիվ	%	Թիվ	%
Գյուղատնտեսության բնագավառի աշխատող (այլ)	-	-	-	-
Ընդամենը	49	100.00	94	100.00

Վերը ներկայացված այլուսակից երևում է, որ տնային տնտեսությունների և՝ դեկավարների (46.94%), և՝ անդամների (47.87%) մեծ մասը մասնավոր ոլորտի աշխատողներ են, որոնց հաջորդում են քաղաքացիական ծառայողները (22.45% և 28.72%): Տնային տնտեսությունների դեկավարների թվում ձեռնարկատերերն ավելի շատ են, քան տնային տնտեսության անդամների շրջանում:

3.3.6 Եկամուտներ և ծախսեր

Ամսական միջին եկամտի վերաբերյալ տվյալները չեն ընդգրկում 2 ԱԵՏՏ-ի, որոնք երկուսն էլ զքաղված են ձեռնարկատիրական գործունեությամբ (բենզայդակայան և զյուղատնտեսական մթերքների արտադրում և վաճառք): Եթե այս գումարները ներառվեին, ապա միջին եկամուտը կլիներ կրկնակի բարձր, որը կաղավարեր ԱԵԱ-ների եկամտի նկարագիրը:

Հարցվող ընտանիքները հայտնեցին իրենց եկամուտների ու ծախսերի մասին: Հետազոտության իրականացման պահի դրությամբ ընտանիքի ամսական միջին եկամուտը տարածքում 506,668.51 ՀՀ դրամ էր կամ շուրջ 1,000 ԱՄՆ դոլար: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների հիմնական եկամուտն ապահովողները ընտանիքի դեկավարներն են (75.38%-ը՝ աշխատող է, իսկ մնացած 18.46%-ը՝ թոշակառու): Թեև տնային տնտեսությունների դեկավարները հիմնական ապահովություններն են, ընտանիքի այլ անդամների կեսից ավելին չունի որևէ եկամուտ (ուսանողներ, գործազուրկ, անշափահասներ):

Աղյուսակ 3-9 Ազդեցության ենթակա տնային տնտեսության եկամուտների աղբյուրները

Եկամտի տեսակը	Միջին եկամուտը
	ՀՀ դրամ / ամսական
Աշխատավարձ	132,143.51
Տարիքային կենսաթոշակ	40,375.00
Այլ տեսակի թոշակ	25,750.00
Կրթաթոշակ	20,000.00
Սոցիալական նպաստ	32,400.00
Արտադրական վնասվածքի համար տրվող նպաստ	13,000.00
Արտասահմանից ստացվող դրամական օգնություն	70,000
ՀՀ-ից ստացվող դրամական օգնություն	46,000
Վարձակալական վճարներից ստացվող եկամուտ	100,000
Այլ	27,000
Ընդամենը	506,668.51

Տնային տնտեսությունների միջին ամսական ծախսերը կազմում էին մոտ 508,778.66 ՀՀ դրամ (1000 ԱՄՆ դոլար), որից մեծ մասը (22.04%) ծախսվում էր սննդամթերքի և ըմպելիքների վրա: Հաջորդ հիմնական ծախսերն են՝ տրանսպորտ, գույքի վարձակալության վճար և այլ ծախսեր՝ համապատասխանաբար 13.30%, 10.81% և 11.35%: Կենցաղային ծառայությունների վճարներում կամ սոցիալական պարտավորությունների հետ կապված ծախսերում մեծ տարբերություններ չկան: Ամսական ծախսերի տվյալներն ամփոփված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 3-10 Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների միջին ամսական ծախսերը

Ինքնահայտարարագրած ամսական ծախսերը	Միջին	Ամսական եկամտի %
	ՀՀ դրամ	
Սննդամթերք և ըմպելիքներ	112,140.35	22.04
Մասնավոր տրանսպորտ (ներառյալ վառելանյութը)	67,677.42	13.30
Հասարակական տրանսպորտ	17,334.69	3.41
Հագուստ	29,293.48	5.76
Առողջապահություն (դեղորայք, ծառայություններ)	28,158.33	5.53
Կրթություն (ուսման վարձեր, գրենական պիտույքներ)	32,076.92	6.30
Բջջային հեռախոսի հաշիվներ	12,920.00	2.54
Քաղաքային հեռախոսի հաշիվներ	1,836.84	0.36
Հասարակական գործունեություն և պարտականություններ	33,380.95	6.56
Էլեկտրաէներգիա, գազ, ինտերնետ և կենցաղսպասարկման այլ ծախսեր	34,689.66	6.82
Գույքի վարձավճար՝ վարձակալության դեպքում	55,000.00	10.81
Գույքահարկ	3,930.49	0.77
Կենցաղային տեխնիկա (շարժական սարքեր, համակարգիչ, հեռուստացույց և այլն)	22,615.38	4.45
Այլ	57,724.14	11.35
Ընդամենը	508,778.66	100.00

3.3.7 Աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններ

Մարդահամարի արդյունքում բացահայտվել է 3 տնային տնտեսություն, որոնք համարվել են աղքատ: Հարկ է նշել, որ ԱԵՏՏ-ների աղքատության մակարդակը որոշվել է մարդահամարի հետազոտության ժամանակ տրամադրված եկամտի վերաբերյալ տվյալների և Ազգային վիճակագրական ծառայության հաշվարկման մեթոդաբանության հիման վրա: Հետևաբար, պետությունից աղքատության ընտանեկան նպաստ ստացող ԱԵՏՏ-ները տարբերվում են մարդահամարի հետազոտության արդյունքում բացահայտված ԱԵՏՏ-ներից, քանի որ պետության կողմից կիրառվել են այլ պարամետրեր ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում գրանցման համար: Այդ 3 ԱԵՏՏ-ներից բացի, մնացած ԱԵՏՏ-ների ամսական եկամուտն ըստ անձի 55,000 ՀՀ դրամից բարձր է, որն, ըստ ՀՀ օրենսդրության, համարվում է աղքատության սահմանափակ: (Տե՛ս «ՀՀ օրենքը նվազագույն ամսական աշխատավարձի մասին», Հոդված 1 (ՀՕ-66-Ն), որն ընդունվել է 17.12.2003-ին և փոփոխվել 01.12.2014-ին): Այնուամենայնիվ, համաձայն ՀՕՏ-ի պահանջների՝ բոլոր ԱԵՏՏ-ների ցուցակը ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ խաչաձև ստուգման և վավերացման համար: (Քանի որ Մարդահամարի միջոցով բացահայտված աղքատ ԱԵՏՏ-ները և ԱՏՏ-ի տվյալները համապատասխանում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տվյալներին, ԵՔ-ին լրացուցիչ դիմելու անհրաժեշտություն չառաջացավ) ԱԵՏՏ-ների իրավասության (առկայության դեպքում) հաստատումը պետք է ապահովել նախքան սույն ՀՕՏ-ի վերջնականացումն ու հաստատումը և նախքան բյուջեի մեջ ներառելը:

3.3.8 Կենսապայմանների վերաբերյալ ընկալումները

65 ԱԵՏՏ-ներ ներկայացրել են իրենց պատկերացումները բնակարանային պայմանների և շրջապատող տարածքի վերաբերյալ: Առավել հաճախ նշվեց ներկա բնակավայրում տարածքի անբավարար լինելը (36.9%), չեռուցման բացակայությունը (24.6%) և պատերի ու հիմքերի խոնավությունը (23.1%): Լույսի անբավարարությունը, պատուհանի փուածությունը և նախքան բյուջեի մեջ ներառելը:

շրջանակները, դրսերը և հատակը նշվեցին հարցման ենթարկված ԱԵԱ-ների նույն տոկոսի կողմից (13.8%) (Աղյուսակ 3-8): Եթե հարց տրվեց իրենց արվարձաններում բնակվելու վատ կողմերի մասին, ԱԵԱ-ների 21.5%-ը նշեց երթևեկության և ձեռնարկատիրական գործունեության արդյունքում առաջացած աղմուկի մասին (Աղյուսակ 3-9):

Աղյուսակ 3-11 Բնակարանային պայմանները

Բնակարանային պայմանները (ինքնահայտարարագրված)	Հաճախականություն	%
Տարածքի անբավարարություն	24	36.9
Լույսի անբավարարություն	9	13.8
Ձեռուցման բացակայություն	16	24.6
Կաթող տանիք	8	12.3
Խոնավություն	15	23.1
Փտած պատուհաններ, դրսեր, հատակ	9	13.8

Աղյուսակ 3-12 Թաղամասի վերաբերյալ ԱԵՏ-ների բնկալումները

Թաղամասի պայմանները (ինքնահայտարարագրված)	Հաճախականություն	%
Աղմուկ, հարևաններ	9	13.8
Այլ աղմուկ (երթևեկություն, ձեռնարկատիրական գործունեություն)	14	21.5
Աղբի խնդիր	3	4.6
Հանցագործություն	6	9.2

3.3.9 Ծրագրի մասին ընկալումը

Հարցված ԱԵՏ-ների 83.3%-ը (100%) արդեն իսկ լսել էր Ծրագրի մասին: Պատասխանողների 81.7%-ը կարծում է, որ Ծրագիրը շրջակա միջավայրի վրա կունենա բացասական ազդեցություն: Հարցված ԱԵԱ-ները հաջորդ բացասական ազդեցությունը համարել են տարաբնակեցման ազդեցությունը՝ 70%, և եկամտի նվազումը՝ 68.3%:

Հասարակական վայրերի ավելի լավ տեսքը, անշարժ գույքի գների աճը և դեպի քաղաքի այլ թաղամասեր ավելի հեշտ մուտքի հնարավորությունը Ծրագրի առավել շատ նշանական ազդեցություններն են (համապատասխանաբար 81.4%, 79.7% և 78.0%):

Աղյուսակ 3-13 Ծրագրի բնկալումը ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կողմից

Ազդեցության տեսակը	Այլ		Ոչ	
	Քանակը	%	Քանակը	%
Ծրագրի ընկալվող թերությունները				
Տարաբնակեցում	42	70.0	18	30.0
Եկամտի նվազում	41	68.3	19	31.7
Երթևեկության ընդհատում	15	25.0	45	75.0
Ճանապարհային անվտանգության վատթարացում, ճանապարհատրանսպորտային պատահարների ռիսկի մեծացում	30	50.0	30	50.0
Անշարժ գույքի գների աճ	40	66.7	20	33.3
Ազդեցություն շրջակա միջավայրի վրա	49	81.7	11	18.3
Առևտրականացում	30	50.0	30	50.0
Սոցիալական ցանցի կորուստ	24	40.0	36	60.0

Ազդեցության տեսակը	Այլ		Ոչ	
	Քանակը	%	Քանակը	%
Համայնքային տարածքների կորուստ	29	48.3	31	51.7
Թերություններ չկան	17	28.3	43	71.7
Ընդամենը	317	52.8	283	47.2
Ծրագրի ընկալվող առավելությունները				
Նոր աշխատատեղերի հնարավորություններ	33	55.9	26	44.1
Հնարավորություններ ձեռնարկատիրական գործունեության համար	31	52.5	28	47.5
Տարածքում կամ տարածաշրջանում անշարժ գույքի գների աճ	47	79.7	12	20.3
Հասարակական վայրերի ավելի լավ տեսք	48	81.4	11	18.6
Նոր բնակիչների ներփակում	23	39.0	36	61.0
Դեպի քաղաքի այլ թաղամասեր ավելի հեշտ մուտքի հնարավորություն	46	78.0	13	22.0
Առավելություններ չկան	24	40.7	35	59.3
Ընդամենը	252	61.0	161	39.0

4 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

4.1 Ընդհանուր տեղեկություններ

Համաձայն ԱՔՀ-ի (2009) և ՀՕՏ-ի՝ ԱԵԱ-ները պետք է ամբողջական խորհրդատվություն ստանան, և նրանց պետք է ընձեռվեն ՀՕՏ-ի պլանավորմանը և իրականացմանը մասնակցելու հնարավորություններ: Նոյն սկզբունքներով ԱԵԱ-ները պետք է համապատասխան կարգով և ժամանակին տեղեկացվեն Ծրագրի պլանավորման գործընթացի արդյունքների, ինչպես նաև ՀՕՏ-ի իրականացման ժամանակացույցի և ընթացակարգերի մասին: Իրականացնող մարմնի (ԻՄ)-ի կողմից ՀՕՏ գործընթացի բոլոր փուլերում պետք է իրականացվի հանրային տեղեկատվության և խորհրդատվության քարոզարշավ: ԻՄ-ն պետք է նաև կազմակերպի ՀՕՏ-ի հրապարակումը: Բացի այդ, ԻՄ-ն պետք է ԱԵԱ-ներին տեղեկացնի փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և վերաբնակեցման մասին:

Սույն գլուխը նկարագրում է ԱԵԱ-ների հետ հանրային լսումների գործընթացի մեխանիզմները, ՀՕՏ-ի հրապարակումը՝ տեղեկատվական նյութերի բաշխման միջոցով, որպեսզի ազդեցության ենթակա անձինք իրազեկվեն իրենց իրավունքների, փոխհատուցման վճարումների ընթացակարգերի և բողոքների լուծման մեխանիզմի մասին:

4.2 Հանրային լսումներ

Երկու հանրային լսում է անցկացվել 9-րդ հատվածի համար: Առաջինը կայացել է 2015 թ. հունիսի 25-ին Սամվել Գևորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցում, երբ ուժի մեջ մտավ ՀՀ Կառավարության որոշումը նախնական ուսումնասիրության վերաբերյալ: Ներկա էին այդ տարածքում հնարավոր ազդեցության ենթակա մարդիկ, Դավթաշեն և Աջափնյակ վարչական շրջանների ներկայացուցիչները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի ներկայացուցիչները: ԱԵԱ-ներին ներկայացվեցին ճանապարհի նախագիծը, տարաբնակեցման գործընթացի հիմնական առանձնահատկությունները, մասնավորապես մանրամասն չափագրման և սոցիալ-տնտեսական հետազոտություններ կատարող աշխատախումբը:

Երկրորդ հանրային լսումն անցկացվեց 2015 թ. դեկտեմբերի 18-ին՝ ծրագրի ազդեցությանը ենթակա տարածքում բնակվող ԱԵԱ-ների համար բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը ուժի մեջ մտնելուց հետո: Հանրային լսումն անցկացվեց Աշոտ Մանուկյանի անվան թիվ 93 միջնակարգ դպրոցում, Դավթաշեն 5 հասցեում: Բոլոր ԱԵԱ-ները հեռախոսազնության միջոցով տեղեկացվել էին հանրային լսումների ամսաթվի և վայրի մասին: Բացի այդ, 2015 թ. դեկտեմբերի 15-ին հայտարարությունը հրապարակվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Հանրային լսումն իրականացվել է ԾԻԳ-ի կողմից՝ ՄՆԵՎ խորհրդատունների աջակցությամբ:

Մասնակիցների թիվը և մյուս համապատասխան տվյալներն ամփոփված են հաջորդ աղյուսակում: Մասնակցությանն առնչվող գրանցումները ներկայացված են Հավելված 6-ում: Ընդհանուր առմամբ 41 ԱԵԱ (8 կին և 33 տղամարդ) (իրենց տնային տնտեսությունների ներկայացուցիչներ, 8 տղամարդ, 1 կին) է մասնակցել հանրային լսմանը (մասնակիցների

ցանկը համապատասխան ստորագրություններով կցված է հանրային լսման արձանագրությանը):

ԱԵԱ-ներին ներկայացվել են ծրագրին առնչվող հետևյալ տեղեկությունները՝ իրավունքների սխեման, բողոքների լուծման մեխանիզմը, գնահատման մեթոդաբանությունը, մանրամասն շափազրման հետազոտությունը, մարդահամարը և սոցիալ-տնտեսական հետազոտությունը: Քննարկված հիմնական հարցերը և պատասխանները, ինչպես նաև առանցքային խնդիրները և մտահոգությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 4-1 Հարցեր և պատասխաններ

Հարցեր	Պատասխաններ
Կասեցման օրից հետո իրականացված բարեփոխումներն այլևս ենթակա չեն փոխհատուցման, իսկ ի՞նչ բարեփոխման մասին է խոսքը:	Խոսքը վերաբերում է ծառերի կամ այլ մշակաբույսերի տնկմանը, վերանորագման աշխատանքներին, շինարարական աշխատանքներին, օրինակ՝ ասֆալտապատում և ցանկացած այլ բարեփոխում, որը կիրականացվի կասեցման օրից հետո:
Այն դեպքում, եթե կա ցանկություն օտարելու նաև գույքի չօտարվող հատվածը, որո՞նք են ԱԵԱ-ի հետազարյակերը: Ո՞վ է հոգում դատական ծախսերը:	Այն օրվանից սկսած, եթե ԱԵԱ-ներն ստանում են պաշտոնական ծանուցաթերթիկները և քարտեզներն իրենց գույքի օտարման վերաբերյալ, նրանց տրվում է ժամկետ, որի ընթացքում կարող են դիմել ԾԻԳ չօտարվող հատվածի օտարման հայցով: ԾԻԳ-ն այդ հայցը սահմանված ժամկետներում ուսումնասիրելուց հետո կտրամադրի պատասխան, իսկ եթե պատասխանն ընդունելի կամ բավարար չլինի ԱԵԱ-ի համար, նա իրավունք ունի դիմելու դատարան: Դատական ծախսերը հոգում են ԱԵԱ-ները:
Ինչպես են լուծվելու մուտքերի խնդիրները, արդյո՞ք մուտքերն ապահովվելու են:	Մուտքերի հարցն ուսումնասիրվել է, մուտք տրամադրվելու է ՕԳ-ի բոլոր գույքերին (բացառությամբ այն դեպքերի, եթե գույքն օտարվում է մուտքը փակելու պատճառով), որոնք Ծրագրի մեկնարկից առաջ ունեին ավտոմեքենայի և ոտքի ձանապարհ՝ մուտք: Ձեզ ներկայացվեց բողոքների մեխանիզմը, ուստի եթե քարտեզների տրամադրման ժամանակ նկատեք, որ մուտք չունեք, կողմեք այդ խնդրով, որին կտրվի համապատասխան լուծում:
Գոյություն ունեցող ձանապարհի մի կողմում կան բնակելի տներ, իսկ գույքահեռ կողմում՝ խանութներ: Հնարավոր չէ՝ արդյոք նախագծային լուծմամբ նոր կառուցվող ձանապարհին տրվի մի փոքր շեղում, այնպես, որ արդյունքում ազդեցության ենթարկվեն խանութները և ոչ բնակելի տները:	Նախագիծն իրականացվել է համաձայն որոշակի չափորոշիչների. այն հաստատվել է: Բացի այդ ԱԶԲ-ի սկզբունքն է հնարավորինս քիչ ազդեցության ենթարկել անձանց: Այսինքն՝ նախագծում տրված են հնարավորինս օպտիմալ տարրերակները:
Արդյո՞ք նախատեսվում է կոյուղու համակարգ:	Ճանապարհի այն հատվածներում, որտեղ արդեն իսկ առկա է կոյուղու ցանց և ազդեցության է ենթարկվելու նախագծի շրջանակներում, կտեղափոխվի, իսկ այնտեղ, որը ներկայում չկա կոյուղացանց, չի նախատեսվում վերջինիս տեղադրումը: Այս սկզբունքով առաջնորդվելու ենք մնացած այլ առկա հաղորդուղիների դեպքում՝ օրինակ զարգացած խողովակներ և այն:
Ի՞նչ սկզբունքով է իրականացվում ապօրինի հողերի փոխհատուցումը:	Սույն Ծրագրի իրականացման շրջանակներում Կառավարության որոշման միջոցով ՀՀ կառավարությունը որոշել է նպաստ հատկացնել ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողատարածքների համար: Հստ մշակված մեթոդաբանության փոխհատուցում տրամադրվում է միայն այն դեպքում, եթե հողատարածքի ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվելու փասոր հաստատվում է թաղավետարանի կողմից և ուղարկվում քաղաքապետարան, ապա փոխհատուցումը տրամադրվում է, հակառակ դեպքում՝ ոչ:

Հարցեր	Պատասխաններ
Ապօրինի հողի վրա ունեմ շինություն, ինչու պետք է փոխհատուցվեմ ապօրինի հողի համար նախատեսված փոխհատուցման սկզբունքով (25%), այն դեպքում, եթե բազմիցս դիմել եմ Երևանի բաղադրապետարան այն օրինականացնելու հայցով, բայց օրինականացման բույլություն չեմ ստացել:	Ինչպես հայտնի է, ձանապարհի շինարարությունն արդեն իսկ նախատեսված է եղել Երևանի գլխավոր հատակագծով, այդ իսկ պատճառով այն հողերը, որոնք ի սկզբանե ընկած են եղել ձանապարհաշինարարական հատվածում, օրինականացման ենթակա չեն դիտարկվել Երևանի քաղաքապետարանի կողմից:

4.3 Տեղեկատվության հրապարակումը

Մարդահամարի և USՀ-ի ընթացքում, բացի հանրային լսումների միջոցով հրապարակված տեղեկություններից, հայերեն լեզվով տպագիր «Իրավունքների սխեման» բաժանվել է բոլոր ԱԵԱ-ներին:

Ծրագրի պլանավորման, իրականացման և մոնիթորինգի ընթացքում նախատեսվել են հանրային իրազեկման հետևյալ գործողությունները.

- ա. ԱԶԲ կայքեզում տեղադրել ՀՕԾ-ի անգլերեն տարբերակը,
- բ. ՀՕԾ-ի հայերեն օրինակները տարածել Դավթաշենի և Աջափնյակի տեղական համայնքային իշխանությունների գրասենյակներում,
- գ. ՀՕԾ-ի և վերջինիս առնչվող բոլոր փաստաթղթերի հրապարակում ԾԻԳ-ի ինտերնետային կայքեզում,
- դ. ՀՀ կառավարության կողմից ՀՕԾ-ի հաստատումից անմիջապես հետո բոլոր ԱԵԱ-ներին ծրագրի մասին վերջնական տեղեկագիր տրամադրել, որը կներկայացնի ազդեցությունների ամփոփագիրը, իրականացման միջոցառումները, ինչպես նաև ՀՕԾ-ի փոխհատուցման քաղաքականությունը (Հավելված 1, 9):

5 ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

5.1 Հիմնական տեղեկություններ

ՀՕՏ-ն իր շրջանակներում ներառում է բողոքների լուծման արագ արձագանքող, դյուրամատչելի և մշակութային տեսանկյունից ընդունելի մեխանիզմ, որն ունակ է ստանալու Ծրագրի իրականացման հետևանքով ֆիզիկական, տցիալական և տնտեսական ազդեցությունների ենթարկված անձանց մտահոգություններն ու բողոքները և նպաստելու դրանց լուծմանը՝ առանձնահատուկ ուշադրություն հատկացնելով խոցելի խմբերի կրած ազդեցություններին: Ազդեցության ենթակա անձինք կունենան հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ցանկացած հարցով բողոքներ և (կամ) հարցումներ ներկայացնելու իրավունք: Ազդեցության ենթակա անձինք կարող են բողոքների քննարկման ընդունված մեխանիզմի շրջանակներում բողոքարկել հողի կամ այլ գույքի չափմանը, գնահատմանը կամ գնորոշմանը, օտարմանը և փոխհատուցմանը վերաբերող ցանկացած որոշում, գործելակերպ կամ գործունեություն: Ազդեցության ենթակա անձանց կտրամադրվեն բոլոր միջոցները՝ իրենց դժգոհությունները բարձրածայնելու համար: ԾԻԳ-ը կապահովի հողի օտարման, փոխհատուցման և տարաբնակեցման վերաբերյալ ցանկացած խոցի կապակցությամբ ներկայացված բողոքների ու դժգոհությունների ժամանակին և արդյունավետ քննարկում:

Բողոքների լուծման մեխանիզմի հիմնական խնդիրներն են՝

- ա. Ձեռք բերել փոխհամաձայնեցված լուծումներ, որոնք երկուստեք կրավարարեն թե՝ Ծրագրին, և թե՝ ԱԵՍ-ներին, ինչպես նաև տեղում լուծում տալ տարաբնակեցման վերաբերյալ բողոքներին՝ խորհրդակցելով դժգոհող կողմի հետ:
- բ. Նպաստել ՀՕՏ-ների սահուն իրականացմանը, մասնավորապես՝ նվազագույնի հասցնել երկարատև դատավարական գործընթացները և կանխել Ծրագրի իրականացման ուշացումները.
- գ. Ժողովրդականացնել զարգացման գործընթացը տեղական մակարդակում՝ միաժամանակ թափանցիկություն պահպանելով, ինչպես նաև ստեղծել ազդեցության ենթակա անձանց հաշվետու լինելու համակարգ:

Ազդեցության ենթակա բոլոր անձինք օտարման ենթակա ունեցվածքի մանրամասն չափագրումներից, գոյքագրումից, հաշվառումից և գնահատումից առաջ անցկացված հանրային լսումների ընթացքում լիովին իրազեկվել են իրենց բողոքները ներկայացնելու իրավունքների և ընթացակարգերի մասին: Իրազեկում կատարվել է նաև ՀՕՏ-ի իրականացման մանրազնին նախապատրաստության միջոցով՝ պահովելով ազդեցության ենթակա բոլոր անձանց լիարժեք մասնակցությունը և խորհրդակցությունները, ինչպես նաև ստեղծելով ազդեցության ենթակա անձանց ու ԾԻԳ-ի և ընդհանրապես տեղական իշխանության մարմինների միջև լայն հաղորդակցության ու համակարգման միջոցներ:

5.2 Բողոքների քննարկման և կարգավորման ընթացակարգ

Սկզբնապես, Բողոքների կարգավորման գործընթացը սկսվել է ոչ պաշտոնական մակարդակում՝ ՀՕՏ-ի նախապատրաստման գործընթացի ժամանակ: ԾԻԳ-ն ազդեցության ենթակա անձանց տվել է բողոքները կամ դիմումները գրանցելու լրացուցիչ

հնարավորություն՝ նրանց ուղարկելով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելումասին ՀՀ կառավարության որոշման վերաբերյալ ծանուցումներ: ՀՕԾ-ի նախապատրաստման այս փուլում ազդեցության ենթակա անձինք կարող են իրենց մտահոգությունները, բողոքները կամ հարցումները գրավոր ներկայացնել անմիջապես Ծրագրի իրականացման գրասենյակ:

Բողոքների և դժգոհությունների ժամանակին, թափանցիկ և գոհացուցիչ քննարկումն ու ազդեցության ենթակա անձանց բողոքների ներկայացման համար բոլոր հնարավոր միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով ԾԻԳ-ը կստեղծի ՀՕԾ-ի ընթացքում և հետագա ժամանակաշրջանում բողոքների և դժգոհությունների լուծման պաշտոնական մեխանիզմ: Բողոքների լուծման այս պաշտոնական մեխանիզմի մեջ կներգրավվեն մի քանի կողմեր, օրինակ՝ ԾԻԳ-ը, Բողոքների դիտարկման խումբը (ԲԴԽ) և Երևանի քաղաքապետարանը: Բողոքների դիտարկման խմբի օգնությամբ և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կկատարվեն բողոքները ԾԻԳ-ի մակարդակում լուծելու փորձեր: ԲԴԽ-ն կապահովի ծրագրի ազդեցությունը կրող անձանց բողոքների գրանցման և կարգավորման արդարությունն ու թափանցիկությունը:

Ազդեցության ենթակա անձինք ԲԼՄ-ի գոյության մասին տեղեկացվել են ՀՕԾ-ի նախապատրաստման փուլում, հանրային լսումների ժամանակ: ՀՕԾ-ի հաստատումից հետո ազդեցության ենթակա անձինք ՀՕԾ-ի տեղեկացրի միջոցով կտեղեկանան վերանայված ԲԼՄ-ի մասին:

Տարաբնակեցման փուլում ստացված դժգոհությունների ու բողոքների կարգավորումը կկատարվի հետևյալ քայլերի և գործողությունների միջոցով.

Քայլ 1

Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձը կարող է բողոք-նամակի, Էլ. փոստի կամ տեղային կիզակետի (ԱԵԱ-ների ներկայացուցիչների) (մանրամասները ներկայացված են ենթագույի 5.3-ում) միջոցով իր առաջարկները, մտահոգությունները կամ դժգոհությունները ներկայացնել նախ ԾԻԳ-ին: ԾԻԳ-ը ստանում և լուծում է տախս կամ պատասխանում/արձագանքում է ազդեցության ենթակա անձանց բողոքներին: Բողոքներն առաջին հերթին կրնունի ԾԻԳ-ը: ԾԻԳ-ի ծրագրի դեկավարը բողոքները կուղղի համապատասխան մասնագետին: Բողոքը ստորագրելու է ազդեցության ենթակա անձը, և այն պարունակելու է հետևյալ տեղեկությունները՝ 1) բողոքի բնույթը, 2) վայրը և 3) բողոքարկողի ամբողջական հասցեն:

Խնդիրը կկարգավորվի բողոքը և համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում (Եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամկետներ սահմանված չեն): Պատասխաններն ազդեցության ենթակա անձանց կտրվեն գրավոր տեսքով: Եթե գործը բարդ է և հետաքրքրություն է պահանջում (օրինակ՝ տեխնիկական փորձագետների մանրազնին հետազոտում կամ պետական կամ հավաստագրված մասնավոր կազմակերպությունների իրավաբանական եզրակացություն), ապա բողոքի ուսումնասիրման ժամանակաշրջանը կարող է երկարաձգվել: Այդպիսի դեպքերում գրավոր ծանուցում կուղարկվի բողոքարկուին, որտեղ կբացատրվեն երկարաձգման պատճառները, կնկարագրվի գործընթացը և կնշվի ուսումնասիրության արդյունքների ներկայացման ակնկալվող օրը:

Եթե պատասխանը չի գոհացնում ազդեցության ենթակա անձին, կամ ԾԻԳ-ի պատասխանատու անձնակազմը ԱԵԱ-ի բողոքին պատասխանելու համար լրացուցիչ կարողությունների կարիք ունի, ապա կարող է ձևավորվել Բողոքների դիտարկման խումբ (ԲԴԽ)՝ գործի համապարփակ, անաշառ և թափանցիկ քննարկումն ապահովելու համար: (Ի պատասխան՝ ԱԵԱ-ները գրավոր կերպով կտեղեկացվեն հաջորդ ԲԼՄ-ի հնարավորությունների մասին: Պատասխան նամակում նշված կլինի, որ ԱԵԱ-ն պետք է գրավոր կերպով ԾԻԳ-ին տեղեկացնի իր դժգոհության և ԲԴԽ կազմելու իր ցանկության մասին) ԲԴԽ-ի՝ ազդեցության ենթակա անձի բողոքի ուսումնասիրության և գլխավոր էլության մասին դատողության օրինական լինելու համար պետք է ԲԴԽ-ի կազմը լինի

հավասարակշռված և ներառի անկախ դիտորդ՝ բողոքի ուսումնասիրման գործընթացի անկողմնակալությունն ու թափանցիկությունն ապահովելու համար: Առաջարկվում է ԲԴԽ-ի հետևյալ կազմը

Անդամներ

Կարգավիճակը

Նախագահ

- ա. ԾԻԳ-ի ներկայացուցիչ
- բ. Անվտանգության անձնակազմի ներկայացուցիչ (ԾԻԳ)
- գ. Տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչ՝ հարկ եղած դեպում
- դ. Վկայագրված տեխնիկական փորձագետ՝ հարկ եղած դեպում
- ե. Ինժեների կամ Կապավառուի ներկայացուցիչ՝ հարկ եղած դեպում
- զ. Ազդեցության ենթակա անձանց ներկայացուցիչ
- է. Անկախ կողմ (օրինակ՝ հասարակական կազմակերպություն)

Անդամ

Անդամ

Անդամ

Անդամ

Անդամ

Դիտորդ

Բողոքի քննարկման արդյունավետ ընթացքին նպաստելու համար պետք է մանրագնին մշակվեն ու բացատրվեն ԲԴԽ-ի յուրաքանչյուր անդամի դերն ու պարտականությունները:

ԲԴԽ-ի կողմից բողոքների ուսումնասիրման գործընթացի ժամանակ կարող են ներգրավվել մի քանի փորձագետներ, օրինակ՝ գույքի գնահատման փորձագետ, գյուղատնտես, չափումների մասնագետ, նախագծային ինժեներ և այլն՝ ըստ յուրաքանչյուր դեպքի անհրաժեշտության: Ազդեցության ենթակա անձի պահանջով կարող է հրավիրվել անկախ կողմ (օրինակ՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ):

Խնդրի կարգավորումը կկատարվի ԲԴԽ-ի ուսումնասիրության մեկնարկից հետո 30 օրվա ընթացքում: Պատասխաններն ազդեցության ենթակա անձանց կտրվեն գրավոր տեսքով:

Քայլ 2

Եթե ազդեցության ենթակա անձը համաձայն չէ ԾԻԳ-ի փոխառուցման առաջարկին կամ բողոքի մերժման պատճառաբանություններին, ապա նա պետք է բողոքով դիմի Երևանի քաղաքապետարան: Ազդեցության ենթակա անձը պետք է բողոքը ներկայացնի ԾԻԳ-ի պատասխանը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: Հայցը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն այս փուլում: Երևանի քաղաքապետարանը պարտավոր է բողոքին պատասխանել 30 օրվա ընթացքում: Երևանի քաղաքապետարանը գործի գրանցումը, վերանայումը և կարգավորումը կատարում է ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Բողոքների քննարկման մեխանիզմից և ընթացակարգերից անկախ՝ ազդեցության ենթակա անձինք իրավունք ունեն բողոքների լուծման գործընթացի ցանկացած պահին իրենց գործերը հանձնելու ընդհանուր իրավասության դատարան: Կզործադրությեն բոլոր ջանքերը, որպեսզի հարցերը կարգավորվեն ԾԻԳ-ի մակարդակով՝ համայնքային լսումների միջոցով: Եթե դա հնարավոր չէ, փորձ կարվի հարցերը լուծելու Երևանի քաղաքապետարանի մակարդակով՝ դատավարական գործընթացներից խուսափելու կամ դրանք հնարավորինս նվազագույնի հասցնելու համար: ԾԻԳ-ը պատշաճորեն կվավերագրի բոլոր բողոքներն ու դրանց լուծումները և հասանելի կդարձնի ուսումնասիրման, մոնիթորինգի և գնահատման նպատակներով:


Բոլոր ստացված ու քննարկված բողոքները կվավերագրվեն՝ անկախ դրանց արդյունքներից: Բողոքների վերաբերյալ գործերի բոլոր փաստաթղթերը կմուտքագրվեն ՀՕԾ ԲԼՄ-ի տվյալների բազայում: Մշակվել է բողոքների գրանցման ձևանմուշ, որը կտրվի ազդեցության ենթակա անձանց, եթե նրանք ներկայացնեն իրենց բողոքները:

ԲԼՄ-ի իրականացումը մոնիթորինգի կենթարկվի ներքին և արտաքին մոնիթորինգի միջոցով: ԲԼՄ-ի մոնիթորինգի հիմնական ցուցանիշներն են՝ բողոքների քանակն ու տեսակը, լուծում ստացած գործերը, կարգավորման համար նախատեսված ժամկետները և այլն: ԾԻԳ-ն ու արտաքին մոնիթորինգային գործակալությունը (ԱՍՊԳ) կմշակեն ներքին և արտաքին մոնիթորինգի ու գնահատման լրացուցիչ ցուցանիշներ, որոնք մոնիթորինգի արդյունքների հետ միասին կներկայացվեն Սոցիալական մոնիթորինգի կիսամյակային

հաշվետվություններում (ՍՄԿՀ), Առաջընթացի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (ԵԱՀ) և Համապատասխանության մասին հաշվետվություններում:

ԲԼՄ-ի ինստիտուցիոնալ սիեման ներկայացված է Նկար 5-1-ում:

Նկար 5-1 Բողոքների կարգավորման գործընթացի գծապատկեր



5.3 Տեղեկատվական և բողոքների կարգավորման ծառայություններից օգտվելու հնարավորություն

Թափանցիկություն և ծրագրի ազդեցությունը կրող համայնքների հանդեպ հաշվետվողականություն պահպանելու և տեղեկատվության տրամադրման, օժանդակման և բողոքների կարգավորման ծառայություններն ազդեցության ենթակա անձանց հասանելի դարձնելու նպատակով՝ ԾԻԳ-ը հաշվի է առել հետևյալ լրացուցիչ միջոցները.

ԾԻԳ-ի համացանցային կայք

ԾԻԳ-ը ստեղծել և գործարկում է համացանցային կայք: Ծրագրին առնչվող փաստաթղթերը մատչելի են համացանցում և կանոնավորապես թարմացվում են: Շահագրգիռ կողմերը, ծրագրի ազդեցությունը կրած մարդիկ և համայնքի անդամները կարող են կայքում տեղադրել իրենց հարցերը, կարծիքներն ու առաջարկները, ստանալ իրենց հարցերի պատասխանները և ձեռք բերել ցանկացած տեղեկություն Ծրագրի մասին:

Հատուկ էլեկտրոնային փոստ

Ծրագրի մասին տեղեկատվությունը լայն հանրությանը և էլեկտրոնային հաղորդակցության միջոցները նախընտրող ԱԵԱ-ներին հասանելի դարձնելու նպատակով՝ ԾԻԳ-ը հատուկ նշանակության էլեկտրոնային փոստի հասցե է ստեղծել լայն հասարակության համար, որպեսզի մարդիկ ուղարկեն իրենց բողոքները, առաջարկները, կարծիքները, հարցերը և

այլն (verabnaketsum@yerevan.am): Էլեկտրոնային փոստի հաշիվն ակտիվ կմնա Ծրագրի ամբողջ ընթացքում, ներառյալ՝ Թերությունների մասին ծանուցման ժամանակաշրջանը: Էլեկտրոնային փոստի հաշիվն մասին տեղեկություններն ազդեցության ենթակա անձանց հաղորդվել են հանրային լսումների ժամանակ, տեղական իշխանության մարմինների կողմից, Ծրագրի տեղեկագրի միջոցով և տեղեկատվության տարածման այլ հնարավոր միջոցներով: Հաշիվն արդեն գործում է:

Առերես հանդիպումներ

Եթե ազդեցության ենթակա անձինք չկարողանան օգտվել առկա միջոցներից, ապա հնարավոր կլինի կազմակերպել առերես հանդիպում ԾԻԳ-ի լիազոր պաշտոնատար անձի հետ: Ազդեցության ենթակա անձանց կտրամադրվեն հետևյալ կոնտակտային տվյալները՝ առերես հանդիպում նշանակելու համար:

ԾԻԳ-ի հեռ.՝ 010-52-09-73
Կոնտակտային հասցեն՝ Փ. Բուզանդի փ. 1/3, 5-րդ հարկ, 0010
Երևան, Հայաստան

Բողոքների ուղարկում փոստով

Ազդեցության ենթակա անձինք, շահագրգիռ կողմերը և լայն հասարակությունը կունենան իրենց բողոքները, մտահոգությունները, կարծիքներն ու առաջարկները ԾԻԳ-ի հետևյալ հասցեին նամակով ուղարկելու տարբերակ՝

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՌԱԿ
Փ. Բուզանդի փ. 1/3, 5-րդ հարկ, 0010 Երևան, Հայաստան

Բոլոր հասանելի միջոցների մասին տեղեկատվությունն ազդեցության ենթակա անձանց հաղորդվում է համայնքային լսումների ընթացքում: Եթե ազդեցության ենթակա անձինք այդ լսումների ժամանակ առաջարկեն իրենց տեսակետներն ու մտահոգություններն արտահայտելու այլ, ավելի արդյունավետ եղանակներ, ապա նրանց առաջարկությունները կընդգրկվեն բողոքների քննարկման մեխանիզմի մեջ, և հանրությունը կտեղեկացվի համապատասխանաբար:

Տեղային կիզակետ (ԱԵԱ-ների ներկայացուցիչ/ներ)

Տեղային կիզակետը (ԱԵԱ-ների ներկայացուցիչ/ներ) կնշանակվի ԱԵԱ-ների կողմից: Այն կունենա հետևյալ գործառությունները. տեղեկատվության փոխանցում ԾԻԳ-ից ԱԵԱ-ներին և հակառակը, ԱԵԱ-ների բողոքները հավաքելը, մասնավորապես՝ ԱԵԱ-ներ բանավոր բողոքները գրանցամատյանում գրանցելը, ԱԵԱ-ներին ԲԼՄ-ի մասին տեղեկացնելը, անհրաժեշտության դեպքում ներգրավվածությունը ԲԼԽ-ում, մասնակցությունը ԾԻԳ-ում, հարկ եղած դեպքում ԲԼԽ-ի դաշտային այցելություններին մասնակցելը և այլն, ինչպես նաև ԲԼՄ-ի միջոցով ԱԵԱ-ների դիմում ներկայացնելու գործընթացին աջակցելը: Տեղային կիզակետը (ԱԵԱ-ների ներկայացուցիչը) կընտրվի ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի՝ ներառյալ ՀՕՏ իրականացման և շինարարության փուլերի համար, ՀՕՏ իրականացմանը նախորդող հանրային լսման ընթացքում, հանրային լսման մասնակիցների կողմից: Տեղային կիզակետը ընտրելուց հետո ԾԻԳ-ը ՍՆՇՎԻ-ի հետ միասին նրանց համար կկազմակերպի կողմնորոշում ապահովող ուսուցում: Այդ ուսուցման ընթացքում կներկայացվեն ՀՕՏ իրականացման գործընթացը, իրավունքների սխեման և ԲԼՄ-ն:

6 ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԲ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունը

6.1.1 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը

ՀՀ Սահմանադրությունը (1995թ.) երաշխավորում է սեփականության իրավունքի պաշտպանությունը: Համաձայն վերջինիս՝ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Հողի օտարման և փոխհատուցման դեպքերը նախատեսվում են ՀՀ հողային օրենսգրքի 102, 104 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (1998 թ.), 2006 թվ. նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 218-221 հոդվածներով: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի փոփոխումը կատարվել է 2014 թ. հունիսին:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարվում է միայն կառավարության կողմից օտարման նպատակը բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու դեպքում: Բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ նշվում են՝

- ա. այն բացառիկ՝ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը,
- բ. օտարվող սեփականության ձեռքբերողը,
- գ. օտարման ենթակա սեփականության իրավունքի օբյեկտները (հասցեները կամ գտնվելու վայրը կամ այլ տվյալներ, որոնցով տվյալ սեփականությունը տարբերվում է այլ սեփականությունից),
- դ. սեփականության օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետը:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում են հողի օտարման ընթացակարգերը և հողամասի և անշարժ գույքի սեփականատերերի՝ փոխհատուցում ստանալու իրավունքը: Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմնի կողմից պետք է կազմվի արձանագրություն, որտեղ կնկարագրվի օտարվող սեփականությունը՝ կառավարության կողմից սահմանված ընթացակարգերի և վերջնաժամկետների համաձայն, ձեռքբերող կողմը, սեփականատերերը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները կարող են մասնակցել արձանագրության կազմմանը, եթե վերջինս արդեն չի կազմվել սեփականության նախնական ուսումնասիրության ժամանակ: Օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկվում է

սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց, որոնք իրավունք ունեն արձանագրությունն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում այն բողոքարկել լիազոր մարմնին և/կամ դատարանում:

Հողամասի/սեփականության օտարումն իրականացվում է ԵՔ-ի և ԱԵՍ-ների կամ նրանց օրինական ներկայացուցիչների միջև պայմանագրի և համաձայնագրի հիման վրա՝ հաշվի առնելով հողի շուկայական արժեքը և կորուստները, այդ թվում՝ նաև դրանից բխող հետևանքային վնասները և կարող է ներառել հողամասի/սեփականության փոխարինումը: Իր գույքի օտարման դիմաց սեփականատիրոջը կվճարվի համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոս ավելի գումարը՝ համաձայն երկրի օրենքի:

Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գնահատումը պետք է իրականացվի՝ 2005 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում սահմանվող ընթացակարգերի համաձայն: Մա իրականացվում է գույքի արտոնագրված գնահատողի կողմից:

6.1.2 Անվտանգության քաղաքականության հայտարարագրի շրջանակներում հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԱԶԲ դրույթները

Հարկադիր տարաբնակեցման ԱԶԲ քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- ա. Խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր տարաբնակեցման դեպքերը:
- բ. Փոխհատուցման/վերականգնման վերաբերյալ դրույթները կապահովեն ԱԵՍ-ների նախքան Ծրագրի իրականացումն ունեցած կենսամակարդակը:
- գ. ԱԵՍ-ները պետք է լիարժեք տեղեկացված լինեն, և նրանց պետք է խորհրդատվություն տրամադրվի ՀՕՏ փոխհատուցման տարբերակների վերաբերյալ:
- դ. Հարկ է հնարավորինս օժանդակել ԱԵՍ-ների սոցիալ-մշակութային ինստիտուտներին:
- ե. Փոխհատուցումը կիրականացվի կանաց և տղամարդկանց հավասարության դիտարկմամբ:
- գ. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի բացակայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա փոխհատուցման/վերականգնման համար:
- ե. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի կանաց կողմից դեկավարվող տնային տնտեսություններին և այլ խոցելի խմբերին, և համապատասխան օժանդակություն պետք է ցուցաբերվի վերջիններին՝ իրենց կենսամակարդակը բարելավելու համար:
- ը. ՀՕՏ-ը պետք է հանդիսանա և իրականացվի որպես Ծրագրի մի մաս, իսկ փոխհատուցման ողջ արժեքը պետք է ներառվի Ծրագրի ծախսերի մեջ:
- թ. Փոխհատուցումն ու տարաբնակեցման նպաստները պետք է ամբողջությամբ տրամադրվեն նախքան ձանապարհի շինարարական աշխատանքների մեկնարկը:

6.1.3 Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատությունը

ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության նկարագրությունն ու տարբերությունները ներկայացվում են հետևյալ աղյուսակում, որտեղ առաջին վեց տողերը վերաբերում են ՀՕՏՀ-ի համապատասխան վերլուծության աղյուսակին, իսկ վերջինն ավելացվել է ձեռով.

Աղյուսակ 6-1 Հողի օտարման և տարաբնակեցման ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Տարաբնակեցման քաղաքականության համեմատություն

ՀՀ օրենսդրություն	ԱԶԲ ԱՔՀ
Հողի փոխհատուցում, միայն անշարժ գույքի սեփականության (օտագործման) իրավունքի գրանցման վկայական ունեցող սեփականատերերին:	Սեփականության վկայականի բացակայությունը խոչընդունվում չէ փոխհատուցման և/կամ վերականգնման համար: Առանց վկայականի անշարժ գույքի օտագործողները նույնպես ստանում են վերականգնման նպաստ:
Բոլոր տների/շինությունները փոխհատուցվում են Ծրագրի շրջանակներում վնասված/քանդված շինությունների համար բացառությամբ չգրանցված հասարակական շինությունների:	ԱԶԲ քաղաքականությունը ներառում է փոխհատուցում նաև չգրանցված հասարակական շինությունների համար:
Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է միայն ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ հողամասը տնօրինող սեփականատերերին:	Բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրվում է բոլոր ԱԵՍ-ներին:
Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական արժեք + գնահատված արժեքի 15%:	Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված ներկայիս շուկայական գնի/փոխարինման արժեքի վրա:
Նախքան գնահատումը հարկ է ԱԵՍ/ԱԵՍ-ներին ներկայացնել ազդեցությունների քանակի և արժեքի, փոխհատուցման գումարների և ֆինանսական օժանդակության վերաբերյալ տեղեկատվություն:	Նույնն է:
Ոչ մի դրույթ չկա զգայի ազդեցություն կրած ԱԵՍ-ների և խոցելի խմբերի եկամտի/ապրուստի վերականգնման միջոցառումների, նպաստների կամ վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ:	ԱԶԲ քաղաքականությունը պահանջում է եկամտի/ապրուստի վերականգնում, լրաց կորուստների, ինչպես նաև վերաբնակեցման գործնթացի շրջանակներում ԱԵՍ-ների կողմից կրած ծախսերի համար:
ՀՀ օրենքը չունի ծրագրի մակարդակով սահմանված որոշակի ԲԼՄ, սակայն ՀՀ օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմներ, որոնց միջոցով ԱԵՍ-ները կարող են օտարման յուրաքանչյուր փուլի ընթացքում դիմումներ, բողոքներ, առարկություններ և առաջարկներ ներկայացնել օտարողին և համապատասխան դեկավար մարմիններին, ինչպես նաև դիմել դատարանի միջնորդությանը: Անկախ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ՀՀ Սահմանադրության համաձայն յուրաքանչյուր անձ դատարանի և պատկան մարմինների առջև ունի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:	ԻՄ/ԳՄ պետք է հաստատի գործառնական մեխանիզմ ֆիզիկական և տնտեսական տեղահանման վերաբերյալ ԱԵՍ-ների մտահոգություններն ու բողոքները ստանալու և լրաց տալու համար: ԻՄ/ԳՄ պետք է իմաստալից հանրային լսումներ անցկացնի Ծրագրի իրականացման սկզբում և ընթացքում, ժամանակին իրապարակի ազդեցությունների գնահատման, ԱԵՍ/ԱԵՍ-ների իրավունքների, փոխհատուցում ստանալու իրավատերյունների և վերջիններիս տրամադրվող ֆինանսական օժանդակության վերաբերյալ համապատասխան և պատշաճ, ԱԵՍ-ներին հասկանալի և հասանելի տեղեկությունները:
ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ անցկացնել հանրային լսումներ ԱԵՍ-ների հետ: Սակայն, ՀՀ օրենսդրությունը սահմանում է օտարման տարբեր փուլերի ընթացքում ԱԵՍ-ներին իրենց քայլերի և	

իրավունքների մասին ծանուցելու վերաբերյալ՝ պահանջներ և պայմաններ, մասնավորապես բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելոց հետո, օտարվող սեփականության նկարագրության արձանագրության մեջ օրինակը, օտարվող սեփականության պայմանագրի նախնական տարրերակն ուղարկվում է սեփականատիրոջը և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցող անձանց: Սեփականության ձեռքբերողը պետք է տեղեկություններ տրամադրի փոխհատուցումը դատարանի կամ նոտարի դեպոզիտային հաշվին փոխանցելու վերաբերյալ: Եթե Օտարողն իրականացնում է օտարվող գույքի նախնական ուսումնասիրություն, սեփականատիրոջը, ձեռքբերողին և օգտագործողին պետք է նախապես տրամադրել բավականաչափ և պատշաճ տեղեկատվություն տվյալ վարույթների բնույթի, հիմքերի և իրավական հետևանքների մասին:

Ընդհանուր առմամբ ՀՀ օրենսդրությունն ու ԱԶԲ քաղաքականությունը ՀՕՏ-ի վերաբերյալ սկզբունքորեն չեն տարբերվում: Այնուամենայնիվ, ՀՀ օրենքները և կանոնակարգերը այնքան ել հստակ չեն սահմանում, թե ԱԵԱ-ների վերականգնումն ինչ ձանապարհով պետք է իրականացվի: Մեկ այլ խնդիր է, որ ԱԶԲ-ն փոխհատուցման կամ նկազագույնը վերականգնման համար իրավասու է ձանաչում անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական ունեցող կամ առանց վկայականի սեփականատերերին կամ գրանցված և չգրանցված օգտագործողներին: ՀՀ օրենսդրության և ԱԶԲ քաղաքականության միջև այս անհամապատասխանությունները համաձայնեցնելու նպատակով ԵՔ-ն Ծրագրի համար պատրաստեց ՀՕՏ նախագիծը, որն ապահովում է փոխհատուցում՝ փոխարինման ողջ արժեքով, բոլոր տարբերի համար և նկազագույնը փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների չպահպանմամբ/առանց սեփականության վկայականի բնակվողների և ձեռնարկատիրական գործունեության համար: ՀՕՏ-ն նախատեսում է նաև վերականգողական փաթեթներ՝ խոցելի և զգալի ազդեցության ենթակա ԱԵԱ-ների համար, որոնք պետք է վերաբնակեցվեն:

Առաջին հերթին պետք է փորձել սեփականության իրավունքով տնօրինվող անշարժ գույքը օտարել ազդեցության ենթակա անձնանց/միավորների հետ առանձին բանակցությունների հիման վրա: Բանակցությունների ձախողման դեպքում կգործի «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը և կնախաձեռնվի հարկադիր օտարման վարույթ: Բանակցության հիման վրա վաճառքի դեպքում ԱԶԲ-ն պահանջում է հավուր պատշաճի ապահովել, որ ԱԵԱ-ներին առաջարկվի արդար գին, տեղեկատվություն և սակարկելու բավարար սահման, ինչպես նաև, որպեսզի նրանց դեպքը մոնիթորինգի ենթարկվի արտաքին գործակալության կողմից: Այս պայմանները լինուին երաշխավորվում են արտաքին գործակալության և, ՀՀ կառավարության փորձի համաձայն, գույքի փոխհատուցման դրույքաշափերը սահմանելու համար՝ գույքի անկախ արտոնագրված գնահատողի ներգրավմամբ:

6.1.4 Սույն Բազմավոր ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) համար ընդունված Հոդի օտարման և տարաբնակեցման շրջանակի սկզբունքները և իրավասությունները

ՀՀ օրենսդրության և ԱԶԲ Անվտանգության քաղաքականության հայտարարագրի (ԱՔՀ) (2009 թվ.) հիման վրա սույն ԲՖԳ-ի համար մշակվել են հարկադիր տարաբնակեցման հիմնական հետևյալ սկզբունքները.

- ա. Հողի օտարման և այլ հարկադիր տարաբնակեցման ազդեցություններից պետք է խուսափել կամ հասցնել նվազագույնի՝ ուսումնասիրելով բոլոր կենսունակ այլընտրանքային ծրագրի նախագծերը:
- բ. Անխուսափելի լինելու դեպքում կմշակվի սեղմ ժամկետներով նոր ՀՕԾ (ինչպես սույն ՀՕԾ-ն), և ԱԵԱ-ները աջակցություն կստանան բարելավելու կամ առնվազն պահպանելու՝ նախքան Ծրագրի իրականացումը իրենց ունեցած կենսամակարդակը:
- գ. Պետք է երաշխավորվի ԱԵԱ-ների հետ փոխհատուցման հարցի շուրջ խորհրդատվությունների կազմակերպումը, տարաբնակեցման հետ կապված տեղեկատվության տրամադրումը և ենթաձրագրերի մշակման/իրականացման շրջանակներում ԱԵԱ-ների մասնակցությունը՝ նախագծի այլընտրանքների վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտելու, ինչպես նաև անկախ մոնիթորինգային գործակալության կողմից իրականացվող մոնիթորինգին մասնակցելու միջոցով:
- դ. Խոցելի և զգալի ազդեցություն կրող ԱԵԱ-ներին կտրամադրվի հատուկ օժանդակություն:
- է. Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական չունեցող ԱԵԱ-ները (օր.՝ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ներ) կստանան կենսապահովման նպաստ՝ հողի փոխհատուցման համար և ամբողջությամբ կփոխհատուցվեն հողից բացի այլ կորուստների դիմաց:
- ֆ. ԱԵԱ-ների կողմից ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները կգրանցվեն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և կփոխհատուցվեն հողի կորուստների դիմաց:
- շ. Եկամտի վերականգնման միջոցների ապահովում:
- թ. ՀՕԾ-ն կտրամադրվի կամ հասանելի կլինի ԱԵԱ-ներին հայերեն լեզվով, Ծրագրի կայքէջի միջոցով:
- ը. Փոխհատուցման, վերաբնակեցման նպատակով օժանդակությունը և վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ կտրամադրվեն նախքան ցանկացած շինարարական աշխատանքների որոշակի փաթեթի իրականացումը:
- ժ. Մշակված է ԱԵԱ-ների բողոքների բավարարման համար համապատասխան մեխանիզմ:

6.2 Փոխհատուցում ստանալու իրավունքը

Ծրագրի ներքո փոխհատուցման կամ առնվազն վերականգնման իրավունք ունեցող ԱԵԱ-ներն են՝

- ա. հողամասը կորցնող բոլոր ԱԵԱ-ները, ովքեր ունեն կամ չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական,
- բ. անշարժ գույքի նկատմամբ իավունքների գրանցման առկայությամբ կամ բացակայությամբ՝ այդ գույքը փաստացի տիրապետող և օգտագործող ԱԵԱ-ները,
- շ. շինությունների, բերքի, մշակաբույսերի կամ հողամասին ամրագրված այլ օբյեկտների սեփականատերերը,
- դ. ձեռնարկատիրական գործունեությունը, եկամուտը և աշխատավարձերը կորցնող ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքը սահմանափակված է կասեցման օրով (որը նկարագրության արձանագրությունների ստորագրման օրն է՝ 2016 թվականի

փետրվարի 22-ը: ԱԵԱ-ները, ովքեր կիաստատվեն ազդեցության ենթակա տարածքներում կասեցման օրից հետո, փոխիատուցման իրավասություն չեն ունենա: Այնուամենայնիվ, նրանց կանխավ կներկայացվի համապատասխան ծանուցում, որով վերջիններիս կինդրվի ազատել տարածքները, ապամոնտաժել կառուցված շինությունները՝ նախքան Ծրագրի իրականացումը սկսելը: Նրանց ապամոնտաժված կառուցյներն ու նյութերը չեն առգրավվի, նրանք տուգանքներ չեն վճարի կամ սանկցիայի չեն ենթարկվի:

6.3 Փոխիատուցում ստանալու իրավունքները

Ծրագրի ներքո ՀՕՏ առաջադրանքները կիրականացվեն՝ ըստ փոխիատուցման իրավունքների և իրավասությունների շրջանակի՝ ՀՀ օրենսդրությանն ու կանոնակարգերին և ԱԶԲ քաղաքականությանը համապատասխան: Փոխիատուցման գումարը սահմանելու համար հիմք է հանդիսանում գույքի շուկայական արժեքը, իսկ այն դեպքերում, եթե գույքի կաղաստրային արժեքը գերազանցում է շուկայական արժեքին, ապա որպես հիմք ծառայում է կաղաստրային արժեքը: Մանրամասների համար տե՛ս Իրավունքների սինթան Գլուխ 7-ում:

ԱԵԱ-ների իրավունքների վերաբերյալ դրույթները ներառում են հողամասի, շինության, մշակաբույսերի և ծառերի կորստի և հարկային հայտարարագրի հիման վրա և/կամ միանվագ վճարման տեսքով ձեռնարկատիրական գործունեության կորստի դիմաց, ինչպես նաև զգալի ազդեցության, վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին դրույթներ: Ստորև մանրամասնորեն ներկայացված են այս իրավունքները:

- ա. Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վրա ազդեցության դեպքում կտրվի դրամական փոխիատուցում շուկայական կամ կադաստրային արժեքով (որն ավելի բարձր է՝ գումարած 15% օժանդակություն՝ համաձայն օրենքի): Եթե ազդեցության է ենթարկվել ԱԵԱ-ի գյուղատնտեսական եկամտի ավելի քան 10%-ը, ապա ԱԵԱ-ն (սեփականատերերը, վարձակալները և բնավարձակալները) պետք է զգալի ազդեցության համար լրացուցիչ նպաստ ստանան, որը համարժեք է կորցրած հողամասից ստացված տարեկան համախառն եկամտի շուկայական արժեքին:**
- բ. Այն ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները ենթակա չեն գրանցման, պետք է միանվագ վերաբնակեցման նպաստի տեսքով դրամական փոխիատուցում ստանան, որը կահշվարկվի՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա հողի շուկայական կամ կադաստրային արժեքի (որն ավելի բարձր է 25%-ը):**
- գ. ԱԵԱ-ները, որոնց կողմից փաստացի տիրապետվող և օգտագործվող գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են գրանցման (եթե այդպիսիք կան), օրենքով սահմանված կարգով գրանցման կարգավիճակ կստանան և կփոխիատուցվեն որպես իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերեր:**
- դ. Վարձակալները կստանան դրամական փոխիատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է՝ գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպով՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, թ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, զ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%-ը:**
- ե. Բնակելի շենքերի/շինությունների համար փոխիատուցում պետք է տրամադրվի բոլոր ԱԵԱ-ներին փոխարինման արժեքով (շուկայական արժեքից ոչ ցածր) +15% օժանդակություն՝ անկախ տան գրանցման կարգավիճակից: Փոխիատուցումը**

տրամադրվելու է առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի և այլն: Մասնակի ազդեցություն կրելու դեպքում և այն դեպքում, եթե սեփականատերը չի ցանկանում տեղափոխել շինությունը, ազդեցությունները կընդգրկեն միայն շինության ազդեցության ենթարկված մասը և այդ մասի լիարժեք վերականգնումը շահագործման համար պիտանիության (նախկին) վիճակին: Վերաբնակեցված սեփականատերերին կտրվի վերաբնակեցման և զգալի ազդեցություն կրելու նպաստ (տե՛ս ստորև):

- զ. Ոչ բնակելի շենքերի/շինությունների համար փոխհատուցումը կտրամադրվի հետևյալ կերպ.**

Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով գույքը տիրապետող և օգտագործող ԱԵՏՏ-ներ՝ շենքերի/շինությունների կորստի դիմաց դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով +15% օժանդակություն (շուկայական արժեքից ոչ ցածր) առանց ամորտիզացիոն մասհանումների, գործարքի համար ծախսերի, փրկված նյութերի և այլն:

Անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով տիրապետվող և օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ ինչպես վերոնշյալ դեպքում, սակայն առանց 15% օժանդակության:

ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի վրա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող շենքեր/շինություններ ունեցող ԱԵՏՏ-ներ՝ փոխարինման արժեքին համարժեք վերականգնման օժանդակություն (առանց ամորտիզացիոն մասհանումների, գործառնական ծախսերի, փրկված նյութերի)՝ հանած օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցման ծախսերի արժեքը, որը չի կարող գերազանցել շինության շուկայական արժեքի 20%-ը: Անհրաժեշտություն չկա օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ ցրանցել այս շենքերը/շինությունները: Վերաբնակեցվող վարձակալներին կտրվեն վերաբնակեցման և զգալի ազդեցության բոլոր նպաստները (տե՛ս ստորև):

- է. Մշակաբույսեր.** Մեկ տարվա բերքի համախառն արժեքի շուկայական գնի դրամական փոխհատուցում: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը պետք է կատարվի և՝ սեփականատերերին, և՝ վարձակալներին՝ իրենց առանձնահատուկ վարձակալության պայմանագրերի հիման վրա:

- թ. Ծառեր.** Շուկայական դրույքաշափերին համապատասխան դրամական փոխհատուցում՝ հիմնվելով ծառերի տեսակի, տարիքի և բերքատվության վրա:

- թ. Զեռնարկատիրական գործունեության.** Մշտական կորուստների (1 տարի կամ ավել) դիմաց կտրվի դրամական փոխհատուցում 1 տարվա գուտ եկամտի չափով՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ժամանակավոր կորուստների դիմաց կտրվի դրամական փոխհատուցում ամսական եկամտին համարժեք՝ հարկային հայտարարագրի հիման վրա, ըստ ձեռնարկատիրական գործունեության դադարեցման ամսաների քանակի: Հարկային հայտարարագրի բացակայության դեպքում այս ԱԵՏՏ-ները կփոխհատուցվեն վերոնշյալ կարգով, սակայն հիմք ընդունելով առավելագույն չհարկվող աշխատավարձը՝ 55,000 ՀՀ դրամ (նվազագույն աշխատավարձը):

- ծ. Մշտապես գործող ձեռնարկատիրական գործունեության աշխատողները** և աշխատակիցները կտանան փոխհատուցում իրենց վեց ամսվա կորցրած աշխատավարձի դիմաց, յուրաքանչյուր ամսվա համար միջին ամսական

աշխատավարձի չափով: Աշխատանքի ժամանակավոր կորուստ փոխհատուցում ձեռնարկատիրական գործունեության դադարեցված ժամանակահատվածում կորցրած աշխատավարձի դիմաց՝ առավելագույնը մինչև 6 ամիս:

- ի. **Վերաբնակեցման նպաստ**. ԱԵՍ-ները, որոնք պետք է տարաբնակեցվեն (ներառյալ վարձակալները), 1 ամսվա կենսապահովման ծախսերի համար կստանան վերաբնակեցման նպաստ նվազագույն աշխատավարձի չափով (55,000 ՀՀ դրամ):
- լ. **Համայնքային կառուցվածքները** պետք է ամբողջությամբ փոխարինվեն կամ վերականգնվեն՝ ապահովելով վերջիններիս՝ նախքան Ծրագիրն ունեցած գործառույթները:
- իս. **Օժանդակություն զգայի ազդեցությունների դեպքում.** այս օժանդակությունը տրամադրվում է այն ԱԵՏՏ-ներին, որոնք կորցնում են գյուղատնտեսական հողի ավելի քան 10%-ը (տե՛ս վերոնշյալ) կամ բնակելի շինություններից վերաբնակեցված ԱԵՏՏ-ներին (ներառյալ վարձակալները):
- ծ. **Օժանդակություն խոցելի անձանց.** Խոցելի անձանց (ԱԵՏՏ-ները, որոնց կենսամակարդակը ցածր է աղքատության սահմանագծից, ինչպես նաև կանանց և տարեցների կողմից դեկավարվող տնային տնտեսությունների) կտրամադրվի վերականգնման նպաստ՝ 6 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով և առաջնահերթություն՝ կապված Ծրագրին առնչվող աշխատատեղերի հետ:

6.4 Փոխհատուցման միավորի արժեքի գնահատում

Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գնահատումն իրականացվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Գույքի տարբեր տեսակների միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը ԱԶԲ-ն գնահատում է հետևյալ մեթոդաբանությամբ:

- ա. **Գյուղատնտեսական նշանակության հողը** գնահատվում է շուկայական դրույքաչափերով՝ ազդեցությունների ուսումնասիրությանը նախորդող տարում անցկացված հողամասի վաճառքի ուսումնասիրության հիման վրա:
- բ. **Առանձնատները/շինությունները** գնահատվել են՝ համաձայն շինարարության տեսակի, նյութերի, արժեքի, աշխատուժի, տրանսպորտի և շինարարական այլ ծախսերի փոխարինման դրույքաչափով: Փոխհատուցման գումարից ամորտիֆացիայի/գործառնական ծախսերի նվազեցում չի կատարվել: Եթե ԱԵՍ-ն չի ցանկանա վերաբնակեցվել, ապա մասնակի ազդեցությունների դիմաց հնարավոր է վճարել բացառապես շինության վնասված մասնաբաժնի կամ վերջինիս վերանորոգման համար:
- գ. **Տարեկան մշակաբույսերը** գնահատվել են՝ շուկայական գների համաձայն նախորդ տարվա բերքի մեծածախ առևտության արժեքի դիմաց: Այն դեպքերում, եթե բերքի դիմաց ավելի, քան 1 տարվա փոխհատուցում պետք է վճարվի ԱԵՍ-ներին, ապա դա պետք է փոխհատուցվի շուկայի համախառն արժեքով:
- դ. **Ծառերը** գնահատվել են տարբեր մեթոդաբանությունների համաձայն՝ պայմանավորված նրանով՝ արդյոք այն պտղատու է, թե ծառայում է որպես փայտանյութ:

Փայտանյութ տվող ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. միջին տարիք և գ. մեծ ծառեր) և փայտի ծավալի արժեքի,

Մրգատու/բերքատու ծառերը գնահատվել են ըստ տարիքային կատեգորիայի (ա. նորատունկ, բ. մեծ, սակայն ոչ մրգատու, և գ. մրգատու). ա. և բ.

կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն կատարված ներդրումների արժեքի հիման վրա, գ. կատեգորիայի ծառերը կփոխհատուցվեն 1 տարվա եկամտի զուտ շուկայական արժեք x առավելագույն տարիների քանակը, որն անհրաժեշտ է ծառը լիարժեք բերքատվության տարիքին աճեցնելու համար:

Միավորի դիմաց փոխհատուցման դրույքաչափերը գնահատվել են արտոնագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ԱԶԲ-ի համար ընդունելի հստակ և թափանցիկ մեթոդաբանության վրա: Գնահատված փոխհատուցման դրույքաչափերն այսուհետև ստուգվել և հաստատվել են ԾԻԳ-ի կողմից:

6.5 Հարկադիր օտարման պայմանները

Հոդի օտարումը հարկադիր օտարման վարույթով ենթադրում է երկարատև գործընթաց և հաճախ կարող է դիմադրության հանդիպել: Նման մոտեցումը, հետևաբար, Ծրագրի համար կնախաձեռնվի միայն ծայրահետ դեպքերում, եթե բանակցություններն ԱԵԱ-ների և ԵՔ-ի միջև ձախողվում են, և չկա այլընտրանքային հողամաս՝ հատված 9-ի իրականացման համար: Նման դեպքերում, այնուամենայնիվ, ԵՔ-ն չի գրադադար անհրաժեշտ հողամասերը, մինչև՝ 1) օրենքով սահմանված կարգով համապատասխան դատական վարույթ չկավի, 2) ձեռք չբերվի դատարանի որոշումը և հավուր պատշաճի չհաղորդվի ԱԵԱ-ներին և 3) փոխհատուցման/վերականգնման գումարները չփոխանցվեն համապատասխան էսքրու հաշվին:

6.6 Օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պայմանները և մեխանիզմը

Սկզբունքորեն անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բոլոր հողօգտագործողները կարող են օրենսդրության պահանջների պահպանմամբ գրանցվել, քանի դեռ նրանք չեն գրադադարում այնպիսի տարածքներ, որոնք պաշտոնապես պահվում են հատուկ հանրային նպատակներով օգտագործման համար, ինչպես օրինակ՝ ռազմական, հիվանդանոցի, դպրոցի տարածքներ կամ տարածքներ, որոնք ենողոգիապես համապատասխան չեն բնակության համար (գետի հուն, ռադիոակտիվ տարածք կամ այլ վտանգավոր կամ ոչ պիտանի հողեր): ՀՀ օրենսդրությունը սահմանում է օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մանրամասն ընթացակարգը:

Այնուամենայնիվ, սույն Ծրագրի համար ընդունված մոտեցումը նախատեսում է օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ենթակա գույքի գրանցման ավելի հեշտ ընթացակարգ, որին հետևում է արդարացի և համարժեք փոխհատուցումը՝ որպես օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված գույքի դիմաց: ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված են նախաձեռնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված անշարժ գույքի գրանցման գործընթացը՝ համաձայն համապատասխան վարչական կանոնակարգերի: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման խնդրի վերաբերյալ ՀՕՏ-ում սահմանված մոտեցումը հետևյալն է.

ա. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները կանցնեն օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների

գրանցման գործընթաց, սակայն կփոխհատուցվեն որպես օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք/սեփականատերեր (փոխարինման արժեքի 115%):

- թ. Ազդեցության ենթակա ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով ոչ բնակելի շինությունների դեպքում ԱԵԱ-ները ստիպված չեն լինի անցնել օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման գործընթաց: Փոխհատուցման գումարը կվճարվի փոխարինման արժեքով առանց օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ծախսերի:
- գ. Ազդեցության ենթակա և ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող հողամասի դեպքում, որը ենթակա է գրանցման, ԱԵԱ-ները օրենքով սահմանված կարգով կզրանցվեն և կվճարվեն որպես անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքներ ունեցող սեփականատերեր:
- դ. Ազդեցության ենթակա հողամասի դեպքում, որը ենթակա չէ օրենքով սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, ԱԵԱ-ներին կտրվի փոխհատուցում՝ տեղափոխության միանգամյա նպաստ, ազդեցության ենթակա հողամասի կադաստրային կամ շուկայական արժեքի (որն ավելի բարձր է) 25%-ի չափով:

Վարձակալները կօրինականացվեն և կփոխհատուցվեն որպես լիարժեք սեփականատերեր, կամ էլ նրանց վարձակալությամբ կտրվի նոր հող: Եթե դա հնարավոր չէ, նրանք կստանան դրամական փոխհատուցում, որը համարժեք է ազդեցության ենթակա հողի շուկայական կամ էլ կադաստրային արժեքին (որն ավելի բարձր է՝ գումարած 15% օժանդակություն՝ կախված վարձակալության մնացած տարիների թվից հետևյալ կերպով՝ ա) մինչև 1 տարի՝ հողի արժեքի 5%-ը, բ) մինչև 15 տարի՝ հողի արժեքի 14%-ը, գ) մինչև 25 տարի՝ հողի արժեքի 20%-ը, դ) 25 տարի և ավելի՝ հողի արժեքի 25%-ը:

7 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԵԿԱՍՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

7.1 Ընդհանուր տեղեկություններ

Ազդեցության ենթակա տնային տնտեսությունների կենսապահովման միջոցների վերականգնման նկատառումով լրացուցիչ աջակցության միջոցների բացահայտման նպատակով՝ ԾԻԳ-ը և Խորհրդատուն ԱԵԱ-ների և համապատասխան տեղական իշխանությունների հետ իրականացրել են հանրային լսումներ: Ծրագրի շրջանակներում սոցիալ-տնտեսական հետազոտության համար տվյալներ հավաքագրելու ընթացքում ԱԵԱ-ներին նաև տրվեց հնարավորություն՝ զնահատելու կենսապահովման միջոցները վերականգնելու իրենց հնարավորություններն այն փոխհատուցումով, որն իրենք իրավասու են ստանալ՝ համաձայն ՀՕՏ-ի: Ավելին՝ ԱԵԱ-ներին հնարավորություն է ընձեռվել առաջարկել լրացուցիչ միջոցառումներ, որոնք, իրենց կարծիքով, նվազագույնը կապահովեին նախքան Ծրագիրն ունեցած իրենց կենսամակարդակի վերականգնումը:

Իրականացված տեղական մարդահամարը բացահայտել է 76 ազդեցության ենթակա տնային տնտեսություն ՀՕՏ-ի տարածքում: Համաձայն ՀՕՏ-ի՝ բոլոր ԱԵՏՏ-ները հաշվի են առնվել սույն ՀՕՏ-ի մշակման ընթացքում չափված իրենց եկամուտների կորստի դիմաց համապատասխանաբար փոխհատուցվելու համար: Մարդահամարն ու սոցիալ-տնտեսական հետազոտությունը ցույց են տալիս, որ այս հատվածի հիմնական ազդեցությունը կլինի բնակիչների և ձեռնարկատիրական գործունեությունների վերաբնակեցումը ձեռնարկատիրական գործունեության հիմնական կառույցների կորստի պատճառով:

7.2 Ազդեցության ենթակա գյուղատնտեսական եկամուտ

Կան ընդամենը 32 ԱԵՏՏ-ներ, որոնք ազդեցության ենթակա հողակտորներից կկորցնեն գյուղատնտեսական եկամուտի ավելի քան 10%-ը:

Աղյուսակ 7-1 Փոխհատուցում և օժանդակություն եկամուտը կորցնող ազդեցության ենթակա անձանց համար

ԱԵՏՏ-ների թիվը	Կորստի նկարագրությունը	Փոխհատուցման Մակարամաները	Տրամադրվող օժանդակությունը
32	Գյուղատնտեսական եկամուտի կորուստ (ներառյալ իրենց սպառման համար)	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր մշակաբույսերի և ծառերի դիմաց իրենց փոխարինման արժեքով՝ ազդեցության ենթակա գույքերի հիման վրա	Վերականգնման նպաստ ՀՀ պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չզրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% -ի չափով Փոխարինման արժեքի փոխհատուցում + 15% սեփականություն հանդիսացող հողակտորների դեպքում

		<p>Փոխառուցում հորի վրա իրականացված բոլոր բարելավումների և գույքերի համար</p> <p>Օժանդակություն զգալի ազդեցության ենթակա տնապին տնտեսություններին մրգատու ծառերի կորստի դիմաց՝ 1 տարվա բերքի արժեքի չափով</p>
--	--	---

7.3 Ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները

Ընդհանուր առմամբ թվով 11 իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն կենթարկվեն մշտական ազդեցության Ծրագրի արդյունքում: Ստորև բերված աղյուսակն (Աղյուսակ 7-2) ամփոփում է ազդեցության մանրամասները իրացման գոտում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության վրա, որոնք պետք է մշտապես տեղափոխվեն:

Աղյուսակ 7-2 Գործունեության վայրը տեղափոխող ձեռնարկատիրական գործունեության վրա ազդեցության մանրամասները

№	Ձեռնարկատիրական գործունեության տևակը	Աշխատանքներ	Ազդեցության ներարկվող հող							Ազդեցության ներարկվող շինություն			Ազդեցության ներարկվող բարեկալումներ			Ազդեցության ենթակա տևային անտեսություններ					
			Քանակը	Սեփական տակարգ տևակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերես, մ²	Ազերգության ենթակա տարածքը	Ազերգության ենթակա % ընդհանուր մեջ	Հողականորի տևածքը	Անվանումը	մ², հատ	Նյութեր	Ազդեցության ներարկված գանձապատճեն	Անվանումը	Նյութեր	Տարածքը, մ², հատ	ԱԵՏՏ ներքություններ	ԱԵՏՏ անդամներ	Տեղականություն		
1	Շինարկութերի վաճառք (հարկային հայտարարագրի առկայությամբ)	2	Համայնք (ԵՊ)	Համայնք (ԵՊ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	464.7	464.7	100	Բնակելի	Ծածկական ներարկված շինություն (մետուղական տևակներ)	5	Ծածկական ներարկված շինություն (մետուղական տևակներ)	3	-	-	Տարածք	Բնտոնապատ	46.67	1	1	Զեռնարկատիրական գործունեության տեղափոխում
2	Շինարկութերի վաճառք (հարկային հայտարարագրի առկայությամբ)	0	Համայնք (ԵՊ)	Համայնք (ԵՊ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործում	135.3	135.3	100	Բնակելի	Ծածկական ներարկված շինություն (մետուղական տևակներ)	3	-	-	-	-	-	-	1	6	Զեռնարկատիրական գործունեության տեղափոխում	
3	Թռչառանորոշում (առանց հարկային հայտարարագրի)	0	Մասնավոր	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոց կողմից օգտագործվող	283.44	867.43	32.68	Բնակելի	Ծածկական ներարկված շինություն (մետուղական տևակներ)	2.31	Տոնֆ/քար	73.48	Մետաղ	-	-	-	1	4	Զեռնարկատիրական գործունեության տեղափոխում	
4	Հացի փուռ (հարկային հայտարարագրի առկայությամբ)	5	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոց կողմից օգտագործվող	62.8	681.5	9.21	Բնակելի	Հացի փուռ	43.63	Աղյուսիք թթման վառարան	Աղյուս	1								
			Համայնք (ԵՊ)	ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքովուագրում	167.86	167.86	100	Բնակելի	Հացի փուռ	143.4	-	-	-			1	6	Զեռնարկատիրական գործունեության տեղափոխում			
5	Սեկի արտադրություն (առանց հարկային հայտարարագրի)	0	Մասնավոր	Անմիջապես սեփականատիրոց կողմից օգտագործվող	407.48	407.48	100	Բնակելի	Բնակելի տուն	58.8	Մետաղ	90	-			1	6	Զեռնարկատիրական գործունեության և բնակարգի տեղափոխում			
			Ծածկական ներարկված շինություն (մետուղական տևակներ)	7.3																	
			Զեղնահարկ	66.74																	
			Հավաքուն	4.26																	

№	Հետարկատիրական գործունեության տևակը	Աշխատանքներ	Ազդեցության ներարկվող հող						Ազդեցության ներարկված շինություն		Ազդեցության ներարկվող ցանկապատ		Ազդեցության ներարկված բարեկալումներ			Ազդեցության ներակա տնային տնտեսություններ									
			Քանակը	Սեփական տակրոջ տեսակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերես, մ²	Ազդեցության ներարկված տարածքը, (մ²)	Ազդեցության ներակա պահանջման % ընդհանուր մեջ	Հողակառորդ տևակը	Անվանումը	մ², հատ	Նորմեր	Ազդեցության ներարկված գծությունը	Անվանումը	Նորմեր	Տարածքը, մ², հատ	ԱԵՏՏ -ներ	ԱԵՏՏ անդամներ	Տեղականում						
										Անկարան	23.65														
6	Թոշնաբուժություն (առանց հարկային հայտարարագրի)	0	Համայնք (ԵԲ)			Համայնք (ԵԲ)	92.56	92.56	100	Բնակելի	Բնակելի տուն	30.22	-	-	Տարածք	Բնտոնապատ	32.32	1	2	Զենարկատիրական գործունեության և բնակավայրի տեղափոխում					
											Օժանդակ կառույց	5.88													
											Ծածկ	12.35													
											Զեղնահարկ	39.9													
7	Ավտոմեքենաների տեխնայտարկելման կայան (առանց հարկային հայտարարագրի)	0	Համայնք (ԵԲ)		Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	492.38	492.38	100	Բնակելի	Բնակելի տուն	89.92	Մետաղ	60	Տարածք	Բնտոնապատ	261.96	1	5	Զենարկատիրական գործունեության և բնակավայրի տեղափոխում					
											Զեղնահարկ	16.22													
											Ավտոտնակալ	14.32													
											Սանհանգույց	9.58													
											Ծածկ	5.86													
											Նկուղ	5.86													
											Ծածկ	34.54													
											Ավտոտեխնապարկան հոր	5.01													
											Համայնք (ԵԲ)	102.51	102.51	100	Բնակելի	-	Մետաղ	30	-	-					
8	Քահարելեկի պահում, տեսակավորում և վաճառում (առանց հարկային հայտարարագրի)	0	Համայնք (ԵԲ)	Վարձակալված	1936.62	1936.62	100	Հասարակական	Բնակելի տուն	184.1	-	-	Տարածք	Ասֆալտ	690.7	2	9	Զենարկատիրական գործունեության և բնակավայրի տեղափոխում							
											Տուֆ / քար	141.33													
			Մասնավոր	Անիջապես տեփականատիրոց կողմից օտագործվող	753.57	753.57	100	Բնակելի	Ջրավազան	56.2	Տարածք	Բնտոնապատ	74.34												
									Ծածկ	17.1															
									Օժանդակ կառույց	44.98															
									Ավտոտնակներ	267.93															

№	Զենարկատիրական գործունեության տեսակը	Աշխատանքների դաշտը	Ազդեցության ներարկվող հող						Ազդեցության ներարկված շինություն		Ազդեցության ներարկվող ցանկապատճեն		Ազդեցության ներակա տևային տնտեսություններ									
			Քանակը	Սեփական տարիք տեսակը	Օգտագործման կարգավիճակը	Ընդհանուր մակերես, մ²	Ազդեցության ներակա տարածքը, (մ²)	Ազդեցության ներակա % ընդհանուր մեջ	Հողականորի տեսակը	Անվանումը	մ², հատ	Նորմեր	Ազդեցության ներարկված գծելապատճեն	Անվանումը	Նորմեր	Տարածքը, մ², հատ	ԱԵՏՏ -ներ	ԱԵՏՏ անդամներ	Տեղականում			
9	Մենամբերքի ներմուծմամ և վաճառք (հարկային հայտարարացրի առկայությամբ)	4	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Պահեստ	176	Մետաղ	37.56	Մետաղ	-	Մետաղ	-	Մետաղ	-		
											Սահմանադրություն	5.21										
10	Ռուսականիայի մասն և բարեկանության և ծառայություններ (հարկային հայտարարացրի առկայությամբ)	2	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Գրասենյակի շենք	44.01	Տուֆ/քար	171	Տուֆ/քար	-	Տուֆ/քար	-	Տուֆ/քար	-		
11	Քենացքական (հարկային հայտարարացրի առկայությամբ)	2	Համայնք (ԵԲ)	Վարձակալված	Վարձակալված	Վարձակալված	Վարձակալված	Վարձակալված	Վարձակալված	Վարձակալված	Բնենգայակայան	55.28							Տուֆ/քար	171	Տուֆ/քար	171
											Օժանդակ կառույց	2.28						Տուֆ/քար	171	Տուֆ/քար	171	
11	Քենացքական (հարկային հայտարարացրի առկայությամբ)	2	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Համայնք (ԵԲ)	Ծածկ	63.64	Տուֆ/քար	171	Տուֆ/քար	-	Տուֆ/քար	-	Տուֆ/քար	-	Տուֆ/քար	-
											Մետաղական կառույց	2.68										
											Վաղեկանութիւն	12.5										
											Վաղեկանութիւն	44.3										
											Ավտոմեքենայի տեխսպասարկման հոր	3.1										
											Տուֆ/քար	27										
											Տուֆ/քար	10.96										
											Տուֆ/քար	8.5										
											Մետաղ	10.5										

Բոլոր տնային տնտեսությունները, որոնք կորցնում են իրենց կողմից իրավանացվող ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունը, անկախ իրավական կարգավիճակից, կստանան աջակցություն՝ իրենց ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունը վերականգնելու համար: Մշտական ազդեցության ենթակա հարկային հայտարարագրով ձեռնարկատիրական գործունեության սեփականատիրոջը կտրվի դրամական փոխհատուցում մեկ տարվա գուտ եկամտի չափով՝ ի լրումն ազդեցության ենթակա ողջ գույքի փոխհատուցմանը: Առանց հարկային հայտարարագրի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ԱԵԱ-ները կստանան կանխիկ փոխհատուցում 12 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով: Մանրամասները ներկայացված են Աղյուսակ 7-3-ում:

Աղյուսակ 7-3 Փոխհատուցում և օժանդակություն ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեության համար

ԱԵԱ-ների թիվը	Կորստի նկարա- գրությունը	Փոխհատուցման մանրամասները	Տրամադրվող օժանդակությունը	Վերաբնակեցման ժամանակը
Մշտական ազդեցության ենթակա ձեռնարկատիրական գործունեությունները				
6-ը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի առկայությամբ	Ձեռնարկատիրական գործունեության կորուստը	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր գույքերի դիմաց իրենց փոխարինման արժեքով	Փոխհատուցում 1 տարվա գուտ եկամտի չափով Ձեռնարկատիրական գործունեության գրանցման ծախսեր Վերաբնակեցման նպաստ տրանսպորտային ծախսերը հոգալու համար	
5-ը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային հայտարարագրի բացակա- յությամբ	Ձեռնարկատիրական գործունեության (որոնցից 4-ը զյուղատնեսական բնույթ ունեն) կորուստը	Փոխհատուցում ազդեցության ենթակա բոլոր գույքերի դիմաց իրենց փոխարինման արժեքով	Օժանդակություն եկամտի կորստի դիմաց՝ 12 ամսվա նվազագույն աշխատավարձի չափով Ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրի տեղափոխման նպաստ՝ տրանսպորտային ծախսերը հոգալու համար Վերականգնման նպաստ ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ՝ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով օգտագործվող օգտագործվող հողի դիմաց՝ վերջինիս շուկայական արժեքի 25% -ի չափով:	Ամբողջ փոխհատուցումը տրամադրելուց հետո 30 օրացուցային օր հետո

7.4 Զբաղվածության կորուստ

Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցմամբ պայմանավորված՝ 15 աշխատողներ մշտապես կկորցնեն իրենց աշխատանքը: Ազդեցության ենթարկված աշխատողների մեծ մասը (5) աշխատում են հացի փռում, 4-ը՝ սննդամթերքի ներմուծմամբ ու վաճառքով, 2-ական աշխատող զբաղված է շինանյութերի վաճառքով, տրանսպորտային ծառայության մեջ և բենզալցակայանում (տե՛ս Աղյուսակ 7-2): Նրանք կփոխհատուցվեն ձեռնարկատիրական գործունեության դադարեցման 6 ամսվա համար իրենց միջին

ամսական աշխատավարձի չափով: Նրանք կստանան աջակցություն այլընտրանքային աշխատանքի անցնելու հարցում:

8 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵՆ

8.1 Ընդհանուր տեղեկություններ

Սույն գլուխը նկարագրում է ՀՕՏ-ի միավոր դրույքաչափի, արժեքի սահմանման համար ընդունված մեթոդաբանությունը և ԱԵԱ-ներին վճարվելիք փոխհատուցումը՝ հատված 9-ի տարաբնակեցման ազդեցությունների դիմաց: Սույն գլուխը նկարագրված տարբեր կատեգորիաների ԱԵԱ-ների փոխհատուցման իրավունքը սահմանված է ՀՕՏ-ով: Փոխհատուցման դրույքաչափերը սահմանվել են արտոնագրված անկախ գնահատողի կողմից՝ թափանցիկ մեթոդաբանության կիրառմամբ, որն ընդունելի է ԱԶԲ-ի, ԾԻԳ/ԵՔ-ի և ՀՀ կառավարության կողմից: ՀՕՏ-ի բյուջեն ամփոփ ներկայացված է սույն գլուխի վերջում:

8.2 Ֆինանսավորման աղբյուրները և բաշխումը

ՀՕՏ-ի մշակման և իրականացման ծախսերը, ներառյալ՝ փոխհատուցումն ու վարչական ծախսերը, կֆինանսավորվեն հետևյալ աղբյուրներից:

Հողմածը	Ֆինանսավորման աղբյուրը	Ընդամենը/ՀՀ դրամ	Ընդամենը/ԱՄՆ դոլար
I. Փոխատուցման բյուջեն, ներառյալ՝ նպաստները			
<i>Արտարժույթի փոխարժեքը 2016-ի հունիսի 24-ի դրույթյամբ, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկ (ԱՄՆ դոլար) 1 ԱՄՆ դոլար =476 ՀՀ դրամ</i>			

Աղյուսակ 8-26 Ամփոփ բյուջեն՝ բառ ֆինանսավորման յուրաքանչյուր աղբյուրի

Ֆինանսավորման աղբյուրը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Երևանի քաղաքապետարան	537,391,803,69	1,128,974,38
ԱԶԲ վարկ	1,521,550,452,34	3,196,534,56
Պետական բյուջե	81,979,647,61	172,226,15
Ընդամենը	2,140,921,903,64	4,497,735,09

9 ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ

9.1 Ընդհանուր տեղեկություններ

ՀՕՏ գործողությունների պլանավորումը և իրականացումը ներառում է առանձին գործընթացներ և տարրեր մասնակիցների փոխգործունեությունը: Սույն գլուխը մանրամասներ է ներկայացնում բոլոր կողմերի, ինչպես նաև ՀՕՏ գործողությունների ընթացքում նրանց դերի մասին:

9.2 Հիմնական գործակալությունները և կազմակերպությունները

9.2.1 Ասիական զարգացման բանկ

Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) կհանդիսանա Ծրագրի ֆինանսավորող մարմինը: Բացի ֆինանսավորումից՝ ԱԶԲ-ն պարբերաբար կղիտարկի Ծրագիրը և ՀՕՏ իրականացումը, ինչպես նաև հստակություն կապահովի պայմանագրերի ստորագրման և շինարարական աշխատանքների նախաձեռնման առնչությամբ:

9.2.2 ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը ծրագրի Գործադիր մարմինն (ԳՄ) է: Այն իրականացնում է Ծրագրի ընդհանուր գործառույթները, այդ թվում՝ գործակալությունների միջև համակարգումը:

9.2.3 Երևանի քաղաքապետարանը և ծրագրի իրականացման գրասենյակը


Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) ընդհանուր պատասխանատվություն է կրում ծրագրի համար: Դա ներառում է նախապատրաստումը, բոլոր ՀՕՏ առաջադրանքների իրականացումն ու ֆինանսավորումը, ինչպես նաև գործակալությունների միջև համակարգումը: ԵՔ-ն Ծրագրին առնչվող իր գործառույթներն իրականացնում է Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով (ԾԻԳ): ԾԻԳ-ի տարաբնակեցման մասնագետն (ՏՄ) անմիջականորեն հաշվետու է ԾԻԳ-ի տնօրենին՝ բոլոր ՀՕՏ առաջադրանքների պլանավորման և իրականացման ընդհանուր կառավարման առումով:

ՏՄ-ն պատասխանատու կլինի հետևյալի համար՝ 1) համագործակցություն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կաղաստի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների հետ, 2) աշակցություն խորհրդատուններին՝ քարտեզագրման, հետազոտման և սեփականության իրավունքի ստուգման աշխատանքներում, 3) ՀՕՏ-ի փոխանցում ԱԶԲ-ին՝ դիտարկման նպատակով, 4) ՀՕՏ-ի իրապարակում, 5) ՀՕՏ-ի իրականացման պլանավորում ու կառավարում և փոխհատուցման բաշխում, 6) աշակցություն՝ բողոքների դեպքում, 7) պատշաճ ներքին մոնիթորինգի ապահովում: ՏՄ-ն նաև կտրամադրի բոլոր անհրաժեշտ

փաստաթղթերը՝ ապահովելու ՀՕՏ բյուջեների շտապ տրամադրումն ԱԵԱ-ներին, և կշարունակի ՀՕՏ-ին առնչվող բոլոր միջոցառումների համակարգումը: Բացի այդ, ԾԻԳ-ի ՏՄ-ն կապ կհանդիսանա ՄՆՇՎԽ-ի տարաբնակեցման մասնագետների և ԵՔ-ի, ԾԿԽ-ի, ԿԳ-ի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ԱԶԲ-ի միջև, ինչպես նաև ՀՕՏ առաջադրանքների առնչությամբ անմիջական հարաբերություններ կզարգացնի ու կպահպանի կառավարության մարմինների հետ: Կախված աշխատանքների շրջանակներից ու բարդությունից՝ ԾԻԳ-ն ավելի շատ մասնագետներ կներգրավի ՀՕՏ-ի իրականացման ընթացքում, եթե նման անհրաժեշտություն առաջանա:

Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ) կազմված է ԵՔ-ի, շահառու կողմ համարվող նախարարությունների ներկայացուցիչներից և դեկավարվում է ՀՀ վարչապետի կողմից: Այն ստեղծվել է՝ Ծրագրիր վերահսկելու և ՀՀ վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 892-Ա որոշմամբ հաստատված կանոնադրությամբ իրեն վերապահված որոշումներ ընդունելու համար:

Նկար 9-1 Հողի օտարման և տարաբնակեցման կազմակերպչական կառուցվածքը և գործողությունները



9.2.4 Խորհրդատուններ

ՀՕՏ-ի նախապատրաստման և իրականացման նպատակով ներգրավվել են մի շարք տարբեր խորհրդատուններ՝

- Սանրամասն նախագծման և շինարարության վերահսկողության խորհրդատուններ (ՄՆՇՎԽ)**՝ ներառում է միջազգային և տեղական ՀՕՏ կարողությունը և հետազոտություն կատարած թիմերը, որոնք սույն ՀՕՏ-ի պատրաստման համար անհրաժեշտ աշխատանքներ են իրականացրել: ՄՆՇՎԽ-ն կաջակցի հատված 9-ի ընդհանուր հսկողության հարցում՝ կապված ՀՕՏ միջոցառումների հետ:
- Արտաքին մոնիթորինգի գործակալություն (ԱՄԿ)**՝ այս խորհրդատուին վարձելու գործընթացը շարունակվում է: ԱՄԿ-ն կիրականացնի սույն ՀՕՏ-ի իրականացման արտաքին մոնիթորինգը և գնահատումը:

գ. Մանրամասն չափագրման և գույքերի անկախ գնահատողներ՝ սա ՄՆՇՎԽ-ի կողմից վարձված հավատարմագրված ընկերություն է՝ չափման և գույքերի գույքագրման, ինչպես նաև սույն ՀՕԾ-ի նախապատրաստման ընթացքում ազդեցության ենթակա գույքերի գնահատման համար:

9.3 Այլ գործակալություններ և հաստատություններ

Մի քանի այլ պետական մարմիններ հատուկ դեր ունեն ՀՕԾ գործընթացներում: Դրանք են՝

- ա. ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ՀՕԾ-ների իրականացման համար բյուջետային միջոցները (բացի հողի փոխհատուցման համար նախատեսված բյուջեից և հողի օտարման հետ կապված հարկերից, տուրքերից, վճարներից և գործառնական ծախսերից) կտրամադրվեն ԵՔ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, վերջնական ՀՕԾ-ի ՀՀ կառավարության կողմից հաստատումից հետո:
- բ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է Ընտանիքների խոցելիության գնահատման համակարգում (ԾԲԳՀ) հաշվառված և նպաստ ստացող խոցելի ԱԵՏՏ-ների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար:
- գ. ՀՀ կառավարությանն առնեքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն՝ պատասխանատու է անշարժ գույքի սեփականատիրության կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման համար և զբաղվում է սեփականության պետական գրանցումով:
- դ. Երևանի համապատասխան վարչական շրջանի դեկանը. Երևանի վարչական շրջանի դեկանը պատասխանատու է ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ զգրանցված իրավունքով օգտագործվող հողակտորների վերաբերյալ տեղեկանքների հաստատման համար:
- ե. Դատարաններ՝ սեփականության օտարումը դատական կարգով իրականացնելու դեպքում ԵՔ-ն՝ ի դեմս ԾԲԳ-ի, կողմ կիանդիսանա դատարանում, որը կքննի օտարվող սեփականության գնի վերաբերյալ հայցը:

9.4 ՀՕԾ իրականացման կարողությունները

ԳՄ/ԾԲԳ-ը վիրած է ձեռք բերել նախորդ ծրագրային հաստվածների համար ՀՕԾ-ներ պատրաստելու և իրականացնելու ընթացքում և ներկայումս ունի բավականաչափ կարողություններ սույն ՀՕԾ-ի իրականացման համար: ՀՕԾ-ի իրականացման համար ԾԲԳ-ը կվարձի և կմոբիլիզացնի փորձառու իրականացնող խումբ: Ի լրումն, ԱԶԲ-ն պարբերաբար ուսուցողական սեմինարներ է կազմակերպում ՀՕԾ-ի իրականացման ոլորտների վերաբերյալ Տարածաշրջանային Տեխնիկական Աջակցություն (ՏՏԱ) 7433-ի շրջանակներում՝ Հողի օտարման և տարաբնակեցման երաշխիքների համապատասխանեցում Կենտրոնական և Արևմտյան Ասիայի տարածաշրջանում: ԾԲԳ-ի անվտանգության հարցերով զբաղվող անձնակազմի անդամները հրավիրվում են մասնակցելու այդ սեմինարներին:

10 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

10.1 Ընդհանուր տեղեկություններ

Սույն գլուխը նկարագրում է ՀՕՏԾ-ի պատրաստման համար նախաձեռնված քայլերը և դրա հաջող իրականացման համար անհրաժեշտ հետազա գործողությունները: Իրականացման ժամանակացույցը ներկայացված է սույն գլխի վերջում:

10.2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման գործողությունները

ԻՄ-ը կսկսի ՀՕՏԾ-ի իրականացումն ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից վերջինիս հաստատումից անմիջապես հետո: ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում, ինչպես նաև ՀՕՏԾ-ի արդյունավետ իրականացման նպատակով ԾԻԳ-ը կվարձի իրականացման լրացուցիչ մասնագետներ՝ կախված աշխատանքի ծավալից: Այն արդեն իսկ նախաձեռնել է որոշ նախնական գործողություններ և որոշակի նախապատրաստական առաջադրանքներ ՀՕՏԾ իրականացումը հաջողությամբ ավարտելու առնչությամբ: Ստորև բերված են մինչ օրս ավարտված հիմնական նախապատրաստական առաջադրանքները.

- ա. Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) հիմնում,
- բ. 2016 թ. փետրվարի 22-ը որպես պաշտոնական կասեցման օր սահմանելը,
- գ. ՀՕՏԾ-ի դրույթների հիման վրա ազդեցությունների, ԱԵԱ-ների և ԱԵՏՏ-ների, անդամների և ծախսերի վերաբերյալ տվյալների հավաքագրում և թարմացում,
- դ. Վերջնական հանրային լսումներ ,
- ե. բոլոր ԱԵԱ-ների գույքի նկարագրության արձանագրությունների հրապարակում (Բոլոր արձանագրությունները՝ բացառությամբ 13 խնդրահարույց դեպքերի, արդեն ներկայացվել են ԱԵԱ-ներին: 23 արձանագրություններ չեն ստորագրվել: 5 ԱԵԱ-ներ հրաժարվել են ստորագրել արձանագրությունները (Մեկ ԱԵԱ ուզում է, որպեսզի գույքն ամբողջությամբ օտարվի և հայց է ներկայացրել դատարան, երկրորդ ԱԵԱ-ն բողոք է բարձրացնում, որպեսզի լուծվի կոյուղու համակարգի հետ կապված հարցը: Երրորդ ԱԵԱ-ն պահանջում է չօտարել հողակտորը, որի վրա կառուցված բնակելի տունը Ծրագրի հետևանքով ենթարկվում է ազդեցության: ԱԵԱ-ներից մեկը կարծում է, որ իր գույքին մոտ կառուցվող հենապատը իր գույքը չի պաշտպանի կեղտաշրերից և աղքից: Մյուս ԱԵԱ-ն համաձայն չէ, որ իր հողամասը ցանկապատով 1 մ շեղված է դեպի հարևանի գույքը, որը չի ենթարկվում ազդեցության, որի պատճառով հողի ազդեցությունը նվազում է 1մ²-ով), 5 ԱԵԱ-ներ գտնվում են ՀՀ-ից դուրս, 13 ԱԵԱ-ներ չեն կարող ստորագրել, քանի որ իրենց գույքը ներառված է ՕՇՄՊ-ում: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ ԻՄ-ը ԱԵԱ-ներին կուլարկի արձանագրությունները: Օրենքի համաձայն՝ ԱԵԱ-ներն իրավունք ունեն բողոքարկել ԻՄ-ին արձանագրությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

գ. Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) նշանակում (Արտաքին մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) ընտրության մրցույթը ընթացքում է, և վերջինիս մոբիլիզացումը նախատեսվում է նախքան ՀՕԾ իրականացման մեկնարկը:)

է. Սույն ՀՕԾ -ի հաստատումը ԾԻԳ-ի կողմից և ներկայացումը ԱԶԲ-ի հաստատմանը՝ այս փաստաթղթի տեսքով:

10.3 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման փուլերը

ԻՄ-ն ԱԵԱ-ներին համապատասխան կարգով կծանուցի և կվճարի տարաբնակեցման համար նախատեսված փոխհատուցումը՝ սույն ՀՕԾ-ում սահմանված իրավասության չափանիշների համաձայն, ներառյալ՝ տեղափոխության և եկամտի վերականգնման աջակցությունը, նախքան շինարարական աշխատանքներն սկսելը:

ԱԵԱ-ների փոխհատուցումների հատկացման գործընթացը, որը համապատասխանում է Ծրագրի ՀՕԾ-ին և ՀՀ օրենսդրությանը, նկարագրված է ստորև:

ա. Օտարման պայմանագրերի նախագծերի և համաձայնագրերի ուղարկումը. ԱԶԲ-ի և ՀՀ կառավարության կողմից ՀՕԾ-ի հաստատումից անմիջապես հետո ԻՄ-ը պայմանագրերի նախագծերը և համաձայնագրերը կուղարկի ԱԵԱ-ներին: ԱԵԱ-ները պետք է պայմանագրերի նախագծում և համաձայնագրերում ներառեն բանկային հաշվեհամարները: ԻՄ-ն ԱԵԱ-ի հետ կկնքի վերջնական պայմանագիրը/համաձայնագիրը՝ վերջիններս ԱԵԱ-ին պատշաճ կարգով ներկայացնելուց հետո 3 ամսվա ընթացքում:

բ. Պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը. ԾԻԳ-ը կկնքի պայմանագրեր իրավական գրանցման կարգավիճակ ունեցող գույքի դիմաց փոխհատուցման համար և համաձայնագրեր՝ նպաստների տրամադրման համար առանց նոտարական վավերացման:

գ. Հարկադիր օտարման ընթացակարգը. այն դեպքում, եթե որոշ պատճառներով (տարածայնություններ ԱԵԱ-ների հետ, իրավական կարգավիճակ ստանալու հետ կապված չլուծված խնդիրներ) ԱԵԱ-ների (սեփականատերեր և սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներ) հետ վերջնական պայմանագիրը չի կնքվում պայմանագրի նախագիծը տրամադրելուց հետո 3 ամսվա ընթացքում, ապա վճարվելիք փոխհատուցման գումարը ԱԵԱ-ների անունով ի պահ կդրվի դատարանի դեպոզիտային հաշվին: ԱԵԱ-ն իրավունք ունի վերցնել գումարը դեպոզիտային հաշվից 7 օրվա ընթացքում: Այս դեպքում պայմանագիրը կհամարվի կնքված: Այլապես, ԻՄ-ը կնախաձեռնի հարկադիր օտարման գործընթաց գործը փոխանցելով դատարանի քննությանը: Հարկադիր օտարման դեպքում դատարանի քննության առարկան կարող է լինել միայն գույքի փոխհատուցման գումարը: Օտարվող գույքի և այլ ակտիվների փոխհատուցման գումարի վերաբերյալ դատարանի որոշումը հիմք կհանդիսանա հողի օտարման համար: Նման դեպքերում տվյալ հողամասի վրա շինարարական աշխատանքները չեն սկսվի մինչև դատարանի կողմից որոշում կայացնելը և վերջինիս օրինական ուժի մեջ մտնելը:

դ. Փոխհատուցման/նպաստների վճարումը. փոխհատուցման գումարը կվճարվի պայմանագիրը կնքելուց հետո՝ 15 օրվա ընթացքում և 15%-ը կվճարվի ԱԵԱ-ի կողմից սեփականությունը ըստ հանձնման ակտի հանձնելուց հետո: Փոխհատուցումը կփոխանցվի ԱԵԱ-ի բանկային հաշվեհամարին:

ե. Շինհրապարակի ազատումը. փոխհատուցման/նպաստների ամբողջ գումարի փոխանցման օրից ԱԵԱ-ները կունենան 30 օր՝ վերաբնակեցման համար: Այս ժամանակարնթացքում նրանք պետք է հասցնեն ապամոնտաժել և տեղափոխել ապամոնտաժված/փրկված նյութերը՝ տների վերակառուցման և իրենց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու նպատակով: ԻՄ-ն իրավունք ունի քանդել այդ կառուցները, եթե ԱԵԱ-ն չի արել դա համաձայնեցված ժամկետում:

Բողոքները կամ առարկությունները (եթե կան այդպիսիք) կլուծվեն՝ սույն ՀՕՏ-ում սահմանված բողոքների լուծման ընթացակարգի համաձայն: ՀՕՏ-ին առնչվող բոլոր գործողությունները կավարտվեն նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը:

10.4 Օրինականացման և շտկող միջոցառումների պլան

ՀՕՏ-ն վերջնականացնելիս մարդահամարի տվյալների, տարբեր պետական մարմիններից ստացված տվյալների, ինչպես նաև իրականացված ՄՉՀ -ի վերլուծության հիման վրա բացահայտվել են մի շարք տիպային դեպքեր և օրինական կարգավիճակ ստանալուն (օրինականացման) առնչվող դեպքեր, որոնց անհրաժեշտ կլինի անդրադարձ ՀՕՏ-ի իրականացման ընթացքում: Օստարման պայմանագրերի ստորագրումը հնարավոր չէ՝ առանց այս խնդիրների լուծման: Հակառակ դեպքում կհամարվի, որ այս դեպքերի համար դատարանը կկիրառի հարկադիր օստարման ընթացակարգ: Հետևաբար, սույն ՀՕՏ-ի ներքո մշակվել է Օրինականացման և շտկող միջոցառումների պլան (ՕՇՄՊ), որը կիրականացվի ՀՕՏ-ի իրականացման ընթացքում: ՕՇՄՊ դեպքերը բաժանվում են երկու հիմնական խմբի:

ա. ԱԵԱ-ների/ակտիվների օրինական կարգավիճակ ստանալուն առնչվող դեպքեր,

բ. Կադաստրային ուղղումներին առնչվող դեպքեր:

10.4.1 ԱԵԱ-ների՝ օրինական կարգավիճակ ստանալուն վերաբերող դեպքեր

ՀՕՏ-ի սկզբունքների համաձայն՝ օրինական կարգավիճակ ստանալու ենթակա ԱԵԱ-ները կարող են ստանալ օրինական կարգավիճակ և փոխհատուցվել՝ համաձայն իրավունքների սխեմայով և ՀՕՏ-ի դրույթներով սահմանված փոխհատուցման իրավունքերի: Համաձայն ՀՕՏ-ում սահմանված «օրինականացման պայմանների»՝ օրինական կարգավիճակ կարող են ստանալ այն ԱԵԱ-ները, ովքեր չունեն պետական գրանցում ստացած սեփականության կամ այլ գույքային իրավունքներ ազդեցության ենթակա հողի և այլ ակտիվների նկատմամբ, սակայն ունեն որոշակի օրինական ակնկալիքներ, որոնք ծագում են օրենքի կամ գույքի փաստացի տիրապետման և օգտագործման ուժով, կամ վերջիններիս գույքային իրավունքների ձեռքբերման հնարավորություններն ուղղակի բխում են կամ սահմանված են՝ ՀՀ իրավական ակտերով: Տիպային բնույթի օրինականացման խնդիրներն առնչվում են՝

ա. բացակա ԱԵԱ-ներին,

բ. ժառանգությանը,

գ. իրավունքների գրանցման վկայագրին,

դ. արգելանքով ծանրաբեռնված գույքին:

Հայաստանի Հանրապետությունից բացակայող ԱԵԱ-ները

Կան 5 ԱԵԱ-ներ, ովքեր բնակվում են Հայաստանից դուրս: Նրանցից 4-ը ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը (անձնագրեր, գրանցման վկայագրեր և այլն): Զեռք չի բերվել

միայն 1 ԱԵԱ-ի անձնագրի պատճենը, ով բնակվում է Բազանիայում: Քանի որ անձնագիրը կարևոր փաստաթուղթ է օտարման գործընթացը նախաձեռնելու, անձի սեփականության իրավունքը ստուգելու, փոխհատուցման գումարը վճարելու համար, անհրաժեշտ է, որ բոլոր համապատասխան փաստաթղթերը հասանելի լինեն ԻՄ-ի համար: Հետազայում գույքի օտարման համար անհրաժեշտ լինի նաև ԱԵԱ-ների ներկայությունը: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությունն ապահովում է մեխանիզմ՝ սեփականատիրոջ բացակայության կամ վերջինիս չգտնելու դեպքում մասնավոր սեփականությունն օտարելու համար: Բացակա սեփականատերերի (ովքեր չեն կարող ներկա գտնվել) խնդիրները լուծելու համար, կիրականացվի հետևյալ ընթացակարգը:

- ա. Բացակա սեփականատիրոջ կոնստակտային տվյալները և նրա վերաբերյալ այլ հնարավոր տեղեկությունները/տվյալները կիավաքագրվեն համանքային իշխանությունից, բարեկամներից և ընկերներից:
- բ. ԱԵԱ-ները կտեղեկացվեն/կծանուցվեն իրենց հողերի/գույքի օտարման (պայմանագրերի նախագծերը ուղարկելու միջոցով) և նրանց մասնակցությունը պահանջող միջոցառումների վերաբերյալ:
- գ. Եթե ԱԵԱ-ն հայտնում է, որ չի կարող ներկա գտնվել, ապա նրան առաջարկվում է լիազորագիր ուղարկել իր ներկայացուցչի անունով, ով հանդես կգա իր անունից՝ պայմանագիրը ստորագրելու համար:
- դ. Սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի կողմից պայմանագիրը չստորագրելու դեպքում գույքը դատական գործընթացի միջոցով կենթարկվի հարկադիր օտարման և փոխհատուցման գումարը կփոխանցվի դատարանի դեպոզիտային հաշվին: Դատարանը կվճարի այս գումարը այն անձին, որ կիաստատի այն ստանալու իրավասությունը՝ ներկայացնելով համապատասխան իրավական փաստաթղթերը:

Ժառանգությանը վերաբերող խնդիրներ

Կա միայն մի դեպք, եթե ընտանիքի անդամները կամ ԱԵԱ-ի ժառանգները ստիպված են փոխել սեփականության իրավունքը սեփականատիրոջ մահից հետո: Ըստ կադաստրային տվյալների՝ նշված ԱԵԱ-ն սեփականատերն է, սակայն հողակտորի մի մասը և դրա վրայի շինությունները, որոնք ազդեցության են ենթարկվում Ծրագրի հետևանքով, մեկ այլ ԱԵԱ-ի կողմից օգտագործվում է ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով: Գույքի վերաբերանցման համար անհրաժեշտ է նույնականացնել իրական ժառանգորդներին և սեփականության իրավունքը ձանաչելուց հետո գույքը պետք է բաժանվի 2 տարբեր օգտագործողների/սեփականատերերի միջև:

Ժառանգության խնդիրը լուծելու համար պետք է իրականացվեն հետևյալ քայլերը.

- ա. ՀՕԾ-ի իրականացման խումբը կողմից համանքային իշխանություններին, բարեկամներին և ընկերներին՝ հանգույցալ սեփականատիրոջ ժառանգների, նրանց բնակության վայրի, գույքի փաստացի տիրապետման մասին տեղեկություններ ստանալու համար:
- բ. Հավաքագրված տեղեկատվության հիման վրա ՀՕԾ իրականացման խումբը կպատրաստի այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են ժառանգությունն ընդունելու համար: Օրինական ժառանգներին կինդրեն պատրաստել ժառանգության ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերը, և անհրաժեշտության դեպքում ՀՕԾ իրականացման խմբի կողմից կցուցաբերվի աջակցություն՝ ժառանգության ընդունման համար փաստաթղթերը կազմելիս:
- գ. Ժառանգության ընդունման համար փաստաթղթերը կազմելուց հետո ԱԵԱ-ներին կինդրեն դիմել նոտարական գրասենյալ: Եթե ժառանգներից որևէ մեկը ՀՀ-ում չէ, ապա նա պետք է ուղարկի նոտարի կողմից վավերացված լիազորագիր (ապոստիլով)

Ժառանգության իր մասնաբաժինը ընդունելու և դրանից ծագող իր իրավունքը գրանցելու համար: Լիազորագիրը պետք է թարգմանվի հայերեն և հաստատվի նոտարի կողմից:

ՀՕԾ իրականացման թիմը կտրամադրի անհրաժեշտ աջակություն ԱԵԱ-ների ժառանգության իրավունքի վկայագրից ծագող իրավունքների պետական գրանցում իրականացնելու հարցում:

Ժառանգների միջև սեփականության իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում, կամ եթե լրացել է ժառանգությունն ընդունելու համար նախատեսված 6 ամիս ժամկետը, ժառանգությանն առնչվող խնդիրները կարգավորվում են դատական կարգով: Եթե ժառանգներն առարկություն չունեն գույքի օտարման պայմանագրի հիմնական պայմանների վերաբերյալ, սակայն առկա են իրավական խոչընդոտներ նոտարական կարգով ժառանգությունն ընդունելու համար, ապա խնդիրը լուծվում է պայմանագրի քննարկման 3-ամսյա ժամկետում և նախաձեռնվում է օտարման գործընթացը:

Իրավունքների պետական գրանցման վկայագրին վերաբերող խնդիրներ

Կան երկու դեպքեր, երբ խնդիրներն առնչվում են ԱԵԱ-ների իրավունքների գրանցման վկայագրերին: Բոլոր երեք դեպքերի համար իրավունքների գրանցման վկայագրերն առկա չեն, մասնավորապես՝ դեպքերից մեկի համար սեփականության իրավունքը հաստատվում է Երևանի գլխավոր հատակագծով, սակայն սեփականության իրավունքը սեփականության վկայականով ամրագրված չէ ԱԳԿՊԿ-ում: Մյուս դեպքում սեփականության կարգավիճակը հաստատվել է ԱԳԿՊԿ-ի կողմից տրամադրված տվյալների միջոցով, ինչպես նաև առկա է գույքը, ինչը հաստատում է սեփականության իրավունքը: Այնուամենայնիվ, այս դեպքի համար նույնպես սեփականության իրավունքը սեփականության վկայականով ամրագրված չէ ԱԳԿՊԿ -ում:

Երկու դեպքերի համար օրինական կարգավիճակի ստացումը պետք է նախաձեռնվի ԱԵԱ-ների կողմից ՀՕԾ իրականացման խմբի աջակցությամբ: Մասնավորապես՝ ՀՕԾ իրականացման խումբը կազմակցի ԱԵԱ-ներին՝ ԱԳԿՊԿ -ում իրավունքների պետական գրանցում կատարելու և սեփականության վկայական ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելիս: ՄՆՎՇԽ-ն կմշակի այս ընթացակարգի համար համապատասխան հատակագծերը՝ ԱԳԿՊԿ -ի կողմից սահմանված ձևաչափով:

Արգելանրով ծանրաբեռնված գույք

ՀՀ օրենսդրության համաձայն՝ գույքերը կարող են գտնվել հետևյալ ծանրաբեռնվածությունների ներքո՝ 1) հիպոթեք, 2) արգելանք և 3) գրավ: ԱԳԿՊԿ-ից ստացված տվյալների վերլուծության հիման վրա առկա են արգելանքի 5 դեպքեր (հողակտորներ), որոնցից մեկը գրավադրված է վարկի դիմաց և միաժամանակ արգելանքի տակ է, 3-ը գրավադրված են վարկի դիմաց, իսկ մեկը՝ ներկայացված է դատարան: Նախքան օտարման պայմանագրի ստորագրումը արգելանքի տակ գտնվող օտարման ենթակա գույքի վրայից պետք է հանվի արգելանքը, այլապես նման դեպքերի համար պետք է կիրառվի բռնագրվման ընթացակարգ: Արգելանքի տակ գտնվող օտարվող սեփականությունը արգելանքից հանելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝

ա. Բացահայտել պարտատերերին, հասկանալ գույքի վրա արգելանք դնելու պատճառները և արգելանքից հանելու գործընթացը (օրինակ՝ հարցում անել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն),

- բ. Առաջարկել պարտապանին (գույքի սեփականատիրոջը) բանակցել պարտատերերի հետ և միշտոցներ ձեռնարկել գույքի վրայից արգելանքը հանելու համար (օրինակ՝ կնքել հաշտության համաձայնություն և ներկայացնել դատարանի հաստատմանը),
- գ. Աջակցել պարտապանին (գույքի սեփականատիրոջը) վերը նշված և այլ առնչվող փաստաթղթերը պատրաստելիս,
- դ. Պարտատիրոջ և պարտապանի միջև համաձայնություն ձեռք չբերելու դեպքում աջակցել պարտապանին (վերջիններիս անհամաձայնության դեպքում՝ պարտատերերին) դիմել դատարան՝ գույքը արգելանքից հանելու պահանջով,
- է. ԱԵԱ-ներին աջակցելու համար կարող են նախաձեռնվել այլ անհրաժեշտ գործողություններ՝ գրավադրման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:

Օրինական կարգավիճակ ստանալու բոլոր դեպքերի համար ԱԵԱ-ները ստիպված կլինեն նախաձեռնել վերը նկարագրված շտկման գործընթացը: Անհրաժեշտության դեպքում ՀՕԾ իրականացման խումբը կազմակից ԱԵԱ-ներին՝ ուղղողդելով անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնել համապատասխան մարմին: Ինչպես սահմանված է ՀՕԾ-ում, օրինական կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ ծախսերը կարող են վճարվել ՀՀ/ԵՔ կողմից հատկացված փոխհատուցման գումարից, եթե ընդունելի է ԱԵԱ-ի համար:

10.4.2 Կադաստրային ուղղումների հետ կապված դեպքեր

Կադաստրային քարտեզի և տվյալների վերլուծության, ինչպես նաև ՄՇՀ (փաստացի չափումներ) արդյունքների հիման վրա բացահայտվեցին դեպքեր, եթե ՄՇՀ արդյունքում բացահայտված ազդեցությունները (ըստ ազդեցության ենթակա հողակտորների փաստացի կոորդինատների) և ազդեցության ենթակա հողակտորների կոորդինատներն ըստ կադաստրային քարտեզի/տվյալների միմյանց չեն համապատասխանում: Մասնավորապես՝

- ա. Փաստացի ազդեցության են ենթարկվում չորս սեփականություններ, սակայն ազդեցության ենթակա հողակտորների կոորդինատները պետք է ուղղվեն կադաստրային քարտեզում և տվյալներում՝ փաստացի չափագրումների կոորդինատների հիման վրա:
- բ. ԳՅ թաղամասում հինգ սեփականություններ, որոնք փաստացիորեն ազդեցության չեն ենթարկվում, կարող են հանվել ՀՕԾ-ից դրանց կադաստրային կոորդինատներն ուղղելուց հետո:

ՀՕԾ-ի մշակման ընթացքում այս բոլոր դեպքերի մանրմասները ներկայացվել են ԱԳԿՊԿ՝ ուղղումների համար համապատասխան հատակագծերով, որոնք ներկայում ընթացքում են:

Օրինականացման և ուղղման դեպքերի համար գործընթացները կնախաձեռնվեն ԱԵԱ-ների կողմից, այդ թվում՝ պահանջվող ծախսերը (կադաստրային ուղղումների համար անհրաժեշտ հատակագծերը, որոնք պատրաստվել են ՄՆՇՎԽ-ի կողմից և ներկայացվել են ԱԳԿՊԿ): Այնուամենայնիվ, ԾԻԳ-ը կարող է աջակցել նկարագրված բոլոր օրինականացման և ուղղման դեպքերին միայն այն դեպքում, եթե ԱԵԱ-ն համաձայն է նախաձեռնել վերը նկարագրված ընթացակարգը: Օրինականացման և ուղղման դեպքերի ցանկը մանրմասներով և ընդունակությամբ ԱԵՍՏ-ներով, ներկայացված է Այլուսակ 10-1-ում:

Այլուսակ 10-1 Օրինական կարգավիճակ ստանալու և կադաստրային ուղղումների դեպքերի ցանկը

No	Կադաստրային ծածկագիրը	Խնդրի նկարագրությունը
Օրինականացման դեպքերը		

No	Կադաստրային ծածկագիրը	Խնդրի նկարագրությունը
1	0149-0020	<p>Իրավունքների գրանցման վկայագրին առնչվող խնդիրներ.</p> <p>Սեփականության իրավունքը հաստատող իրավական փաստաթուղթը Երևանի գլխավոր հաստակիքն է: Գույքը պետք է սեփականության վկայականով ամրագրվի ԱԳԿՊԿ -ում:</p>
2	0149-0005 0149-1201	<p>Ժառանգությանը և իրավունքների գրանցման վկայագրին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 0149-0005 ծածկագրով գույքի սեփականատերը մահացել է: Սեփականության իրավունքը հաստատող իրավական փաստաթուղթը գույքի տեխնիկական անձնագիրն է. սեփականության պետական վկայականն առկա չէ: Հողակտորի մասը և դրա վրա գտնվող շինուազները, որոնք ենթարկվում են ազդեցության, ՀՀ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ չզրանցված իրավունքով օգտագործվում է մյուս ԱԵՍ-ի կողմից: Նրանք տարբեր փողոցներից ունեն առանձին մուտքեր:</p> <p>Գույքը պետք է գրանցվի և բաժանվի երկու տարբեր օգտագործողների/ սեփականատերերի միջև՝ Ծրագրի շրջանակում իրական ԱԵՍ-ին բացահայտելու համար:</p>
3	0148-0006	Սեփականատերը գտնվում է ՀՀ-ից դուրս:
4	0317-0010	Սեփականատերը գտնվում է ՀՀ-ից դուրս:
5	0147-0025	Սեփականատերը գտնվում է ՀՀ-ից դուրս:
6	0149-0014	Սեփականատերը գտնվում է ՀՀ-ից դուրս: Հնարավոր չեղավ ձեռք բերել անձնագիր պատճենը և անհրաժեշտ փաստաթղթերը:
7	0149-0051	Սեփականատերը գտնվում է ՀՀ-ից դուրս:
8	0051-0034	<p>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը 04.05.2007 թ.-ից գրավադրված է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում:</p>
9	0148-0007	<p>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը 08.05.2015 թ.-ից գրավադրված է «Անելիք բանկ» ՓԲԸ -ում:</p>
10	0069-0030	<p>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ առկա է գույքին առնչվող խնդիր, որը 04.11.2014 թ. ներկայացվել է դատարան: Գործի վերաբերյալ հարուցվել է դատական վարույթ (ԵԱԴԴ 0095/04/15):</p>
11	0149-0007	<p>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը 23.12.2013 թ.-ից գրավադրված է «Արարատբանկ» ԲԲԸ-ում:</p>
12	0149-0044	<p>Արգելանքով ծանրաբեռնված գույքին առնչվող խնդիրներ.</p> <p>ԱԳԿՊԿ -ի տվյալների համաձայն՝ գույքը արգելանքի տակ է դրվել ԴԱՀԿ ծառայության կողմից և գրավադրված է՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ում:</p>
Կադաստրային ուղղումների դեպքերը		

No	Կադաստրային ծածկագիրը	Խնդրի նկարագրությունը
13	0148-0003	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Կան անհամապատասխանություններ փաստացի չափագրումների և Երևանի գլխավոր հատակագծի միջև։ Փաստացի չափագրումների համաձայն՝ հողակտորի ընդհանուր մակերեսը 701.45 քառ. մ է, իսկ ըստ Գլխավոր հատակագծի՝ 624.3 քառ. մ։ ԱԵԱ-ն դիմել է ԵԲ-ի տեղագրության բաժին՝ լրացուցիչ չափագրումների և ուղղումների համար։ Ազդեցության ենթակա մակերեսը ճշգրտորեն կարող է բացահայտվել միայն ԵԲ-ից նոր Գլխավոր հատակագիծը ստանալուց հետո, որի հիման վրա գույքը սեփականության վկայականով կամրագրվի ԱԳԿՊԿ -ում։</p>
14	0050-0023	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Երկու մասնավոր հողակտորների սահմանները համընկնում են հարակից հողակտորի հետ։ Հողակտորի փաստացի չափագրումների արդյունքում բացահայտված մակերեսը (քառ.մ) և սեփականության վկայականում նշված միջանց չեն համապատասխանում։</p>
15	0050-0022	<p>Ազդեցության ենթարկվող մակերեսը կարող է ճշգրտորեն որոշվել միայն կաղաստրային քարտեզում նշված հորի սահմաններն ուղղելուց հետո։</p>
16	0141-0002	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Ազդեցության ենթարկվող մակերեսը կարող է ճշգրտորեն որոշվել միայն կաղաստրային քարտեզում նշված հորի սահմաններն ուղղելուց հետո։ ԵԲ/ԾԻԳ-ի պահանջով ԱԳԿՊԿ -ն պէտք է փոխի այս հողակտորի կոորդինատները՝ վերջինիս վրա ազդեցություններից խուսափելու համար։</p>
17	0109-0029	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Ըստ կաղաստրային քարտեզի՝ հողակտորը ենթարկվում է ազդեցության, մինչդեռ փաստացի չափագրումների արդյունքում ազդեցության չի ենթարկվում։ Ներկայումս ԵԲ Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը ճշտում է կոորդինատները, որից հետո ԱԳԿՊԿ -ն կուղղի կաղաստրային քարտեզը։</p>
18	0103-0094	<p>Կաղաստրային խնդիր. (ԳՅ թաղամասում գտնվող սեփականությունները, որոնք հնարավոր են հանվեն ՀՕԾ-ից):</p>
19	0103-0095	<p>Աջափնյակ համայնքի 0103-0120 հողակտորի փաստացի սահմանների երկայնքով հանույթի աշխատանքների արդյունքում պարզվեց, որ այս գույքը տեղակալված է 9 մ առաջ դեպի Աշտարակի մայրուղին։ Քանի որ նույն կաղաստրային քաղամասի 0103-0118, 0103-0119, 0103-0094, 0103-0095 հողակտորները փաստացիորեն չեն նշահարվել, դրանք ազդեցության են ենթարկվում ըստ կաղաստրային քարտեզի և 0103-0120 (վերջինս փաստացիորեն ենթարկվում է ազդեցության) հողակտորի շարունակություն են։</p>
20	0103-0118	<p>ՀՀ ԱԳԿՊԿ-ի պաշտոնական արձագանքի համաձայն՝ հնարավոր է, որ նշված հողակտորները չուղղվեն, քանի որ դրանք ուղղելու համար անհրաժեշտ կլինի ուղղել ԳՅ թաղամասն ամբողջությամբ։ Ուղղելիս՝ ԳՅ թաղամասի որոշ սեփականություններ համընկնում են «Վահագնի թաղամաս» գույքի հետ։ Բայց այդ, ԳՅ թաղամասում կառուցված որոշ շենքեր չեն համապատասխանում թաղամասի նախագծային հատակագիծն։</p>
21	0103-0119	<p>Ներկայումս ԵԲ Ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը ճշտում է կոորդինատները, որից հետո ԱԳԿՊԿ-ն կուղղի կաղաստրային քարտեզը։ Ուղղումից հետո նշված հողակտորները կարող են հանվեն ՀՕԾ-ից, քանի որ դրանք այժմ ազդեցության են ենթարկվում միայն ըստ կաղաստրային քարտեզի/տվյալների։</p>
22	0103-0120	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Կաղաստրային տվյալների համաձայն՝ սա վարձակալված հող է (վարձակալության պայմանագրի ժամկետն անցել է), որի վրա կա պաղպաղակի կրպակ։ Ըստ ՍԶՀ տվյալների այս տեսակի շինություններ դաշտում չեն բացահայտվել։ Այդ հողակտորի օգտագործման նշաններ առկա չեն։</p>
23	0149-0028	<p>Կաղաստրային խնդիր.</p> <p>Կաղաստրային տվյալների համաձայն՝ սա վարձակալված հող է (վարձակալության պայմանագրի ժամկետն անցել է), որի վրա կա պաղպաղակի կրպակ։ Ըստ ՍԶՀ տվյալների այս տեսակի շինություններ դաշտում չեն բացահայտվել։ Այդ հողակտորի օգտագործման նշաններ առկա չեն։</p>

ՀՕԾ իրականացման ընթացքում ազդեցությանը և փոխհատուցումներին առնչվող բոլոր փոփոխությունները կենթարկվեն մոնիթորինգի և կներկայացվեն Սոցիալական երաշխիքների կիսամյակային մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվություններում),

Առաջընթացի եռամսյակային հաշվետվություններում (ԱԵՀ) և Համապատասխանության հաշվետվությունում:

10.4.3 Ազդեցությունները շինարարության փուլում

Այն դեպքերում, եթե շինարարության փուլում որևէ ազդեցություն ի հայտ է գալիս Կապալառուի գործողությունների հետևանքով, մասնավորապես՝ եթե ձեռնարկատիրական գործունեությունն ազդեցության է ենթարկվում ժամանակավորապես փակված մուտքի պատճառով, կամ վնասվում են ԱԵՍ-ների բարելավումները (մշակաբույս, ծառ և այլն), ԱԵՍ-ների փոխիհատուցումը կատարվում է Կապալառուի հաշվին հետևյալ ընթացակարգով՝ 1) ազդեցությունը կգնահատվի և կարձանագրվի Կապալառուի կողմից և կստորագրվի ԱԵՍ-ների կողմից, 2) ԱԵՍ-ների փոխիհատուցումը կգնահատվի ՀՕՏ-ում սահմանված իրավունքների և սույն ՀՕՏ-ում սահմանված գնահատման մեթոդաբանության համաձայն, 3) ԱԵՍ-ներին պատշաճորեն կտեղեկացնեն դրա մասին, 4) փոխիհատուցման համաձայնագիր կկնքվի ԱԵՍ-ների հետ: Իրականացված բոլոր գործողությունների մասին կիրագեկվեն Պատվիրատուն և ՄՆՇՎ-ն՝ ստանալով ստորագրված արձանագրության և համաձայնության օրինակները:

10.5 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման ժամանակացույցը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված ժամանակացույցը ցույց է տալիս ՀՕՏ -ի պատրաստման, վերջնականացման և իրականացման հատակ փուլերը:

Աղյուսակ 10-2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի պատրաստման, վերջնականացման և իրականացման ժամանակացույց

Մերորա բանական առաջադրանքը	Առաջադրանք/գործողությունը	Պատասխանատվությունը	Սկիզբ	Ավարտը	
			ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ		
ՆԱԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ				17/11/2014	25/08/2015
Փուլ 1	Քայլ_01 Կաղաստրային քարտեզի և տվյալների ձեռքբերումը	ԾԻԳ	17/11/2014	19/03/2015	
Առաջադրանք 4	Մանրամասն նախնական նախագծի ներկայացում ԱԳԿՊԿ՝ ազդեցության ենթակա գույքի մասին տեղեկություններ ստանալու համար (ազրեր)	ԾԻԳ	17/11/2014	17/11/2014	
	ԱԳԿՊԿ /ԵՔ պատասխանը	ԾԻԳ/ ԱԳԿՊԿ	03/03/2015	18/03/2015	
	Ազդեցության ենթակա գույքի վերջնական ցանկի պատրաստում՝ ՀՀ կառավարության կողմից նախնական ուսումնասիրության վերաբերյալ որոշման ընդունման համար	ԾԻԳ/ՄՆՇՎ	18/03/2015	19/03/2015	
	Քայլ_02 ՀՀ կառավարության որոշումը նախնական ուսումնասիրության համար	ԾԻԳ	16/03/2015	25/06/2015	
Առաջադրանք 3	Գույքի նկարագրության արձանագրության վերանայված ձևաչափը	ԾԻԳ	16/03/2015	09/04/2015	
	Սույն ՀՕՏ-ի կամ վերանայված տարբերակի կիրառման հաստատումը	ԾԻԳ	26/03/2015	26/03/2015	
Առաջադրանք 4	ԾԻԳ-ի կողմից ՀՀ կառավարության որոշման համար նախնական ուսումնասիրության փաթեթի պատրաստում	ԾԻԳ	30/03/2015	20/05/2015	

Մերույա բանական առաջադրանքը	Առաջադրանքը/գործողությունը	Պատասխանատվ ությունը	Սկիզբ	Ավարտը
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏԸ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ				
	ՀՀ կառավարության որոշման համար նախնական ուսումնամասի հաստատում (Նշում. 45 օր՝ դիմումի և հաստատման միջև)	ՀՀ կառավարություն	17/06/2015	21/05/2015
Առաջադրանք 5	Հանրային լսումներ (այդ թվում՝ նախապատրաստական աշխատանքները)	ԾԻԳ/ՄՆՇՎԻՆ	19/03/2015	25/06/2015
Քայլ_03 Սոցիալական և ՄԶՀ հետազոտություններ			29/06/2015	08/08/2015
Առաջադրանք 6	Ակտիվների չափագրման հետազոտություն	ՄՆՇՎԻՆ	29/06/2015	27/07/2015
	Կորուստների գույքագրում	ՄՆՇՎԻՆ	29/06/2015	27/07/2015
	Նախնական քարտեզների պատրաստում (հատակագծեր)		09/07/2015	25/08/2015
	ԱԵԱ-ների փաստաթղթերի հավաքագրում	ՄՆՇՎԻՆ	04/07/2015	19/07/2015
	Մարդահամարի և USZ իրականացում	ՄՆՇՎԻՆ	06/07/2015	23/02/2016
Առաջադրանք 8	Գույքի գնահատում	ՄՆՇՎԻՆ	14/07/2015	29/08/2015
	Տվյալների մուտքագրում տվյալների բազայում	ՄՆՇՎԻՆ	03/08/2015	25/08/2015
ՎԵՐՁՆԱԿԱՆ ՀՕՏԸ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ			04/07/2015	10/09/2016
Քայլ_01 Բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին որոշումը			04/07/2015	21/12/2015
Առաջադրանք 7	Վերջնական մանրամասն նախագծի վերջնականացում (Բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին որոշում)	ՄՆՇՎԻՆ	04/07/2015	26/08/2015
	Ազդեցության ենթակա գույքի վերջնական ցանկի պատրաստում Բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին որոշման համար	ՄՆՇՎԻՆ	09/07/2015	27/08/2015
	ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին որոշում ընդունելու ԾԻԳ-ի նախաձեռնությունը	ԾԻԳ	28/09/2015	08/10/2015
	ՀՀ կառավարության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ձանաչելու մասին որոշման ընդունումը	ՀՀ կառավարություն	3/12/2015	21/12/2015
Փուլ 2	Քայլ_02 Վերջնական քարտեզների պատրաստում և հանձնում ԱԵԱ-ներին		12/12/2015	18/02/2016
Առաջադրանք 1	Հանրային լսումներ. գնահատման մեթոդանության և նախագծի ներկայացում	ԾԻԳ/ՄՆՇՎԻՆ	04/12/2015	19/12/2015
	Գույքի մանրամասն չափագրման արդյունքների ստուգում/թարմացում	ՄՆՇՎԻՆ	11/12/2015	30/12/2015
	Քարտեզների (հատակագծեր) նկարագրության արձանագրությունների պատրաստում	ՄՆՇՎԻՆ	12/12/2015	22/12/2015
	Քարտեզների ներկայացում ԱԵԱ-ներին՝ ազդեցության ենթարկվող/չենթարկվող մասերի վերաբերյալ ծանուցման նպատակով	ԾԻԳ	19/12/2015	22/12/2015
	Բացակայող տեղեկանքների ձեռքբերում, որոնք ենթակա են հաստատման կամ ժխտման թաղապետի կողմից	ԾԻԳ/Թաղապետ	20/10/2015	17/03/2016
	ՖՆ-ից պարզաբնումների/հատակեցումների ձեռքբերում	ԾԻԳ/ՖՆ	21/03/2016	11/04/2016
	Կադաստրային խնդիրների լուծում	ԾԻԳ/ԱԳԿՊԿ	24/11/2015	օպԳօնԳ
	ԱԳԿՊԿ-ից մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի սահմանափակումների վերաբերյալ տվյալների ձեռքբերում	ԾԻԳ/ԱԳԿՊԿ	22/01/2016	15/02/2016

Մեթոդա բանական առաջարքանքը	Առաջարքանք/գործողությունը	Պատասխանատվ ությունը	Սկիզբ	Ավարտը
			ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏԾ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ	
	ԱԵԱ-ների՝ իրենց գույքի ազդեցության չենթարկվող մասն օտարելու պահանջը	ԾԻԳ	21/12/2015	19/02/2016
Առաջարքանք 3	ԱԵԱ-ների հետ նկարագրության արձանագրությունների ստորագրում	ՄՆԵՎԻՆ	08/01/2016	23/03/2016
Առաջարքանք 4	Գույքի գնահատում/նպաստների հաշվարկ	ՄՆԵՎԻՆ	13/01/2016	24/03/2016
	Տվյալների մուտքագրում տվյալների բազայում	ՄՆԵՎԻՆ	08/01/2016	24/03/2016
	Քայլ_03 ՀՕՏԾ -Ի ՎԵՐՁՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ		11/01/2016	10/09/2016
Առաջարքանք 3	Ստորագրված արձանագրությունների ներկայացում ԾԻԳ-ին	ՄՆԵՎԻՆ	11/01/2016	23/03/2016
	Ստորագրված արձանագրությունների մասին ծանուցում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	21/01/2016	01/04/2016
Առաջարքանք 4	Տվյալների ստուգում և վերլուծություն	ՄՆԵՎԻՆ	29/01/2016	04/04/2016
	ՀՕՏԾ վերջնական փաստաթղթի պատրաստում	ՄՆԵՎԻՆ	04/04/2016	14/04/2016
	Վերջնական ՀՕՏԾ -ի ներկայացում ԾԻԳ-ին՝ մեկնարարանությունների համար	ՄՆԵՎԻՆ	15/04/2016	15/04/2016
	Վերջնական ՀՕՏԾ -ի ներկայացում ԱԶԲ-ին՝ մեկնարարանությունների համար	ԾԻԳ	22/04/2016	22/04/2016
	ՀՕՏԾ վերջնականացում՝ ըստ ԱԶԲ-ի մեկնարարանությունների	ՄՆԵՎԻՆ	07/05/2016	19/05/2016
	Վերջնականացված ՀՕՏԾ-ի ներկայացում ԱԶԲ-ի հաստատմանը	ԾԻԳ	20/05/2016	20/05/2016
	ԱԶԲ-ի կողմից ՀՕՏԾ-ի հաստատումը	ԱԶԲ	21/05/2016	09/06/2016
Առաջարքանք 4	ՀՕՏԾ-ի հայերեն տարբերակը	ՄՆԵՎԻՆ	10/06/2016	19/06/2016
	ՀՀ կառավարության կողմից ՀՕՏԾ -ի հաստատումը	ՀՀ կառավարություն	20/07/2016	20/08/2016
	ՀՀ կառավարության կողմից ՀՕՏԾ բյուջեի հաստատումը	ՀՀ կառավարություն	20/07/2016	20/08/2016
Առաջարքանք 3	Բոլոր ակտիվների համար Գնահատման հաշվետվությունների պատրաստում	ՄՆԵՎԻՆ	20/08/2016	19/09/2016
	Հաստատված ՀՕՏԾ փաստաթղթի տեղադրումը ԱԶԲ-ի և ԵԲ-ի կայքերում	ԱԶԲ և ԾԻԳ	25/08/2016	25/08/2016
	ՀՕՏԾ տեղեկատվական բրոշյուրի հրապարակում	ԾԻԳ	02/09/2016	10/09/2016
ՀՕՏԾ -Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ*			20/8/2016	4/7/2017
	ՀՕՏԾ բյուջեի հատկացումը ԵԲ-ին	ՖՆ		20/8/2016
	Հնարավոր հարկադիր օտարման դեպքերի բացահայտում	ԾԻԳ	1/21/2016	1/17/2017
	Պայմանագրերի նախագծերի ուղարկում ԱԵԱ-ներին	ԾԻԳ	10/9/2016	10/19/2016
	Պայմանագրերի ստորագրում	ԾԻԳ	10/10/2016	1/17/2017
	Փոխհատուցումների հատկացում	ԾԻԳ	10/11/2016	1/27/2017
	Հարկադիր օտարման վերջնականացում, հարկադիր օտարման վերաբերյալ դատարանի որոշման ներկայացում	ԾԻԳ	1/17/2017	4/17/2017
	ՀՕՏԾ-ի Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԱՄԳ	10/9/2016	2/16/2017
	ՀՕՏԾ-ի Համապատասխանության հաշվետվության պատրաստում	ԾԻԳ	2/20/2017	2/25/2017
	ՀՕՏԾ -ի Համապատասխանության	ԱԶԲ	3/5/2017	3/20/2017

Մեթոդական բանական առաջարքանքը	Առաջարքանքը/գործողությունը	Պատասխանատված ությունը	Մկիզք	Ավարտը
			ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ՀՕՏԾ-Ի ՊԱՏՐԱՍՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ	
	հաշվետվության դիտարկումը ԱԶԲ -ի կողմից			
	ՀՕՏԾ -ի Համապատասխանության վերջնական հաշվետվության ներկայացում ԱԶԲ-ին	ԾԻԳ	3/25/2017	3/30/2017
	ԱԶԲ -ի կողմից ՀՕՏԾ-ի Համապատասխանության հաշվետվության հաստատումը	ԱԶԲ	3/30/2017	4/5/2017
	Շինհրապարակի հանձնումը կապալառուին	ԾԻԳ	4/6/2017	4/6/2017
	Շինարարական աշխատանքների մեկնարկը	Կապալառու	4/7/2017	4/7/2017
	Մոնիթորինգ	ԾԻԳ/ԱՄԳ	շարունակական	
	Բողոքների լուծում	ԾԻԳ	շարունակական	

*Ներկայացված ժամանակացույցի համապատասխան ՀՕՏԾ-ի իրականացման ապահովումը սերտորեն կապված է օրինականացման գործընթացի հաջողության, ինչպես նաև առաջ քաշված օտարման դեպքերի լուծման և քանակի հետ. այսպիսով՝ ներկայացված ժամանակացույցը կարող է փոխվել ՀՕՏԾ իրականացման առաջընթացի հիման վրա:

11 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

11.1 Ըսդհանուր տեղեկություններ

ՀՕԾ-ի իրականացումը կենթարկվի թե՝ ներքին, թե՝ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը կիրականացվի ԾԻԳ-ի կողմից: Արտաքին մոնիտորինգը հանձնարարված է արտաքին մոնիտորինգի գործակալությանը (ԱՄԳ), որը պետք է վարձվի ԵՔ-ի կողմից և հաստատվի ԱԶԲ-ի կողմից:

11.2 Ներքին մոնիտորինգ

Ներքին մոնիտորինգը պարբերաբար կիրականացվի ԾԻԳ-ի կողմից և՝ ուղակիորեն, և՝ ՀՕԾ իրականացման համար վարձված լրացուցիչ մասնագետների աջակցությամբ: Արդյունքները կհաղորդվեն ԱԶԲ-ին ծրագրի իրականացման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների, ինչպես նաև տարաբնակեցման մոնիտորինգի կիսամյակային հաշվետվության կամ հաշվետվությունների միջոցով: Ներքին մոնիտորինգի ցուցանիշները կլինեն գործընթացներին, անմիջական հետևանքներին և արդյունքներին վերաբերող ցուցիչները, որոնք թույլ կտան գնահատել առաջընթացը և ՀՕԾ-ի իրականացման արդյունքները, ինչպես նաև փոփոխել աշխատանքային ծրագիրը, եթե անհրաժեշտ է: Մոնիտորինգի հատուկ հենանիշները կներառեն՝

- ա. տեղեկատվական քարոզարշավը և ԱԵԱ-ների համար կազմակերպվող հանրային լսումները,
- բ. հողակտորի օտարման գործընթացը և հողակտորի դիմաց փոխհատուցման վճարումը,
- գ. ազդեցության ենթակա շինությունների և այլ գույքի փոխհատուցումը,
- դ. ԱԵԱ-ների վերաբնակեցումը,
- ե. եկամտի կորստի հետ կապված վճարումները,
- գ. փոխարինման ենթակա հողատարածքների ընտրությունը և բաշխումը,
- է. եկամտի վերականգնմանն ուղղված գործողությունները:

Վերոնշյալ տվյալները կհավաքագրվեն ԾԻԳ-ի կողմից, որը պատասխանատու կլինի Ծրագրի տարաբնակեցման ամենօրյա գործողությունների մոնիտորինցի համար հետևյալ գործիքների միջոցով՝

- ա. բոլոր ԱԵԱ-ների մարդահամարի տվյալների դիտարկում,
- բ. խորհրդակցություններ և ոչ պաշտոնական հարցազրույցներ ԱԵԱ-ների հետ,
- գ. դեպքերի մանրազնին ուսումնասիրություններ:
- դ. ԱԵԱ-ների ընտրանքային հարցում:
- է. հիմնական իրազեկիչների հետ հարցազրույցներ, և

զ. համայնքային խորհրդատվական հանդիպումներ:

11.3 Արտաքին մոնիթորինգ

Արտաքին մոնիթորինգը կիրականացնի խորհրդատվական ընկերությունը, որը ԵՔ-ի կողմից ընտրվող և ԱԶԲ-ի կողմից հաստատվող արտաքին մոնիթորինգային գործակալություն (ԱՄԳ) է:

Արտաքին մոնիթորինգը ենթադրում է երկու տեսակի գործողություն՝ ա) ՀՕԾ-ի իրականացման և փոխհատուցման տրամադրման կարձաժամկետ մոնիթորինգ ու գնահատում և բ) ՀՕԾ ծրագրի վերականգնողական ազդեցությունների երկարաժամկետ գնահատում:

11.3.1 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի իրականացման կարձաժամկետ մոնիթորինգ և գնահատում

Սույն առաջադրանքը կիրականացվի յուրաքանչյուր ՀՕԾ միջոցառման իրականացմանը զուգահեռ և կենթադրի բազմաթիվ դաշտային այցելություններ և հաղորդակցություն ԱԵԱ-ի և ԻՄ-ի միջև։ Սույն առաջադրանքի արդյունքում կմշակվի վերջնական Համապատասխանության հաշվետվություն, որտեղ կնշվի, թե արդյոք փոխհատուցման ծրագրը կատարվել է ՀՕԾ և ԱԶԲ քաղաքականության դրույթների հիման վրա և ԱԵԱ-ներին գոհացուցիչ կերպով։ Համապատասխանության հաշվետվությունը կտրամադրվի ԾԻԳ-ին/ԵՔ-ին և ԱԶԲ-ին։ ԱԶԲ-ի կողմից Համապատասխանության հաշվետվության հաստատումը կիամարվի շինարարական աշխատանքների ձեռնարկման նախապայմանը։ Համապատասխանության հաշվետվությունը կներառի հետևյալ կետերը՝

- ա. ԱԵՏՏ-ների և ԱԵԱ-ների թվի ստուգում,
- բ. Ստուգում առ այն, որ արձանագրություններում ազդեցությունների գնահատումները համապատասխանում են իրական ազդեցություններին,
- շ. Ստուգում առ այն, որ գնահատման հաշվետվություններում, պայմանագրերում և համաձայնագրերում օգտագործված փոխհատուցման միավոր դրույքաչափերը համապատասխանում են ՀՕԾ-ի դրույթներին,
- դ. Ստուգում առ այն, որ փոխհատուցումը տրամադրվել է բոլոր ԱԵՏՏ-ներին ՀՕԾ-ում նշված գումարներին համապատասխան,
- ե. Փոխհատուցման գործընթացի իրականացման/սահմանված ժամկետների գնահատումը ՀՕԾ դրույթների և արդյունավետության ցուցանիշների առնչությամբ,
- զ. Դժգոհությունների դեպքերի դիտարկում՝ ներառյալ գնահատումն առ այն, թե արդյոք դժգոհության լուծումն իրականացվել է ՀՕԾ-ի դրույթներին համապատասխան և գոհացնելով ԱԵԱ-ին,
- է. ԱԵԱ-ի գոհունակության գնահատում՝ հիմնված ԱԵՏՏ-ների 25% ընտրանքային խումբ ներառող հարցման վրա,
- ը. Դատական կարգով օտարման դեպքերի իրականացման և ամփոփման գնահատում,
- հանրային լսումների իրականացման և ԻՄ-ԱԵԱ հաղորդակցության գնահատում,
- թ. զգալի ազդեցության ենթարկված, խոցելի և վերաբնակեցված ԱԵԱ-ներին նպաստների հատկացման գնահատում և

Ժ. ՀՕՏ-ի համապատասխանության կամ անհամապատասխանության վերջնական գնահատում:
Եթե ՀՕՏ իրականացումը բավարար չէ, վերջնական գնահատումը պետք է մանրամասն ներկայացնի անհրաժեշտ ուղղիչ միջոցառումները:

11.3.2 Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի վերականգնողական միջոցառումների արդյունքների երկարաժամկետ գնահատում

Սույն առաջադրանքը կկատարվի մեկ տարում՝ ՀՕՏ-ի իրականացման ավարտից հետո, պարզելու արդյոք ՀՕՏ-ի վերականգնողական նպատակները հաջողվել են թե՝ ոչ։ Սույն ՀՕՏ-ում ներառված ԱՏՀ տվյալներն ուղենիշներ կհանդիսանան ծրագրի նախնական և վերջնական պայմանների համեմատության համար։ Հետազոտությունը մանրամասն կներակայացնի՝

- ա. ԱԵԱ-ների սոցիալ-տնտեսական պայմանները տարաբնակեցման ժամանակաշրջանից հետո,
- բ. ԱԵԱ-ների հետ հաղորդակցությունը և նրանց արձագանքներն իրավունքների, փոխհատուցման, ընտրությունների, այլրուանքային զարգացումների և վերաբնակեցման ժամանակացույցների վերաբերյալ,
- գ. Փոփոխությունները բնակարանային և եկամտային մակարդակներում,
- դ. սեփականության գնահատումը,
- ե. դժգոհություններին առնչվող ընթացակարգերը,
- գ. Փոխհատուցման հատկացումը,
- ի. ԱԵԱ-ների գոհունակության մակարդակը տարաբնակեցման ժամանակաշրջանից հետո,
- լ. ազդեցության ենթակա անձանց տնտեսական և սոցիալական բազայի վերականգման մակարդակը,
- թ. ԱԵԱ-ների կենսամակարդակի և ապրուստի միջոցների փոփոխությունը,
- ժ. երկարաժամկետ արդյունավետությունը իրավունքների ազդեցությունն ու կայունությունը, և
- ի. հետազա մեղմացման միջոցառումների անհրաժեշտությունն ու քաղված դասերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ

Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ